Գոհար Մուրադյան

ՓՈՔՐ ԿՅԱՆՔԻ ՄԵԾ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Սիրելի՛ ընթերցող, սա իրական կյանքի պատմություն է՝ իրական հանգույցներով ու իրական հանգուցալուծմամբ: Պատմության մեջ կան նշումներ Աստվածաշնչից՝ թե՛ Նոր, թե՛ Հին կտակարաններից: Ցանկալի է նշված հատվածները համատեղ ընթերցել:

Մեջբերումները հիմնավորում են այն արթնություններն ու հայտնությունները, այն իրական զարթոնքը, որոնք շարունակում են ապրեցնել հույսով, հավատքով, սիրով:

Հեղինակի կողմից

Գոհար Մուրադյան

ՓՈՔՐ ԿՅԱՆՔԻ ՄԵԾ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

© Գոհար Մուրադյան
ՓՈՔՐ ԿՅԱՆՔԻ ՄԵԾ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Մանկություն,

Պատանեկություն, երիտասարդություն…
աշխարհայացքի ձևավորում.....5

Ամուսնություն, ընտանիք.....9

Անապահովությունից
ու անորոշությունից դեպի երազանքներ 11

Վերադարձ հայրենիք..... 13

Փախուստ..... 17

Ապաստան 19

Բարի սերմը..... 21

Հարցեր և ներքին պատերազմ.....24

Անսպասելին՝ սպասված.....27

Հանդիպում 32

Ապաշխարություն 35

Նվեր երկնքից՝ հավատք դեպի
մեռելներից հարություն առած Աստված.....36

Աստվածաշնչի խոսքը կենդանացնում է.....38

«Վե՛ր կաց». այն այսօր էլ արդիական է..... 41

Կանչի՛ր Նրան.....44

Աղոթքի զորությունը.....47

Հավատքը՝ որոշում և ապրելակերպ 52

Ներումը՝ օրհնության դուռ.....58

Վկայություն.....62

ՄԱՆԿՈՒԹՅՈՒՆ, ՊԱՏԱՆԵԿՈՒԹՅՈՒՆ, ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅՈՒՆ... ԱՇԽԱՐՀԱՅԱՑՔԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄ

Սիրելի՛ ընթերցող, մինչև մտքերս թղթին կհանձնեմ, կուզեի ընթերցելուց առաջ մի բան հստակ ընդունես, որ ոչինչ մեր կյանքում պատահական չի լինում: Եվ այս փոքրիկ կյանքի մեծ պատմությունը հենց դրա վկայությունն է:

Ուզում եմ պատկերացում կազմես այն մարդու մասին, ով գրում է այս պատմությունը, մեկի, ում մտքով երբևէ չէր էլ անցնի իր իսկ մասին խոսել գրավոր:

Ծնվել եմ Հայաստանում, հրաշալի բնությամբ և պատմական հին հուշակոթողներով հարուստ Աշտարակ քաղաքում, խորհրդային տարիների ստանդարտներին համապատասխան ինտիլիգենտի ընտանիքում. հայրս՝ ինժեներ, մայրս՝ հաշվապահ:

Չնայած ժամանակների խստությանը՝ հայրս, լինելով կոմունիստ, ինձ, մյուս երկու քույրերիս և միակ եղբորս մկրտել՝ կնքել է եկեղեցում, որն էլ խոսում է կրոնին՝ քրիստոնեությանը հավատարիմ լինելու մեծ վստահության մասին:

Ծնողներիս օրինավոր ապրելակերպը և լավ դաստիարակությունը ինձ միշտ ինքնավստահություն էին ներշնչում: Ճիշտ է՝ հայրս հարում էր կոմկուսի շարքերին, բայց շատ հա-

ճախ էինք զրուցում, և նա միշտ պնդում էր, որ ինչ-որ բանի, ինչ-որ մեկի կողմից մենք նախասահմանված ենք:

Ըստ նրա՝ դա կարող էր լինել Աստվա՞ծ, բնությո՞ւն, թե՞ այս տիեզերական ուժը, սա միշտ անպատասխան էր մնում: Այնուամենայնիվ երբեք չի մերժել արարչագործությունը: Մի բանում հաստատ համոզված էր, որ կապիկից չենք ստեղծվել…

Մայրս բարի և առաքինի կին էր, բոլորին ի սրտե նվիրվում էր, շատերի կարիքներին հասնում: Շատ սիրում էր եկեղեցի գնալ, մասնակցում էր եկեղեցական ծիսակատարություններին, մասնավորապես՝ ուխտագնացություններին, դեռ մեզ էլ ստիպում էր միանալ: Այսքանով էլ ավարտվում էր նրա աստվածապաշտությունը:

Մանկության տարիներին զգացել եմ ծնողներիս հոգատար վերաբերմունքը: Մշտական պաշտպանվածություն և շատ կարևոր արժեքներ փոխանցվել էին ինձ, մասնավորապես՝ հարգել մեծերին, սիրել հայրենիքը և ուսումը, լինել հասարակության և ազգի համար պիտանի մարդ:

Ահա այս սկզբունքներով էլ ձևավորվել էր իմ աշխարհայացքը: Դպրոցում ակտիվ հասարակական գործունեությունն էլ ժամանակ առ ժամանակ ոգևորում էր: Կոմունիստական կուսակցության իշխանության տարիներին գործում էին հոկտեմբերիկական, պիոներական, կոմերիտական կազմակերպություններ, և դրանց մեջ առաջադեմ լինելը շատ կարևորվում էր յուրաքանչյուրի ապագայի համար: Ինձ վստահվել էր դպրոցում գործող պիոներական կազմակերպության՝ դրուժինայի խորհրդի նախագահ լինելու պատիվը: Ակամայից մաս-

նակցել եմ տարբեր միջոցառումների՝ շփվելով այն ժամանակվա բարձրաստիճան պաշտոնյաների և նշանավոր մարդկանց հետ: Աթեիզմի ճնշող գաղափարախոսության ներքո իմ ներսում ձևավորվում էր ռոմանտիզմը: Ինչպես որ յուրաքանչյուր աղջնակի համար, ինձ համար էլ ամեն բան կյանքում դյուրին էր թվում: Դրան նպաստում էր ապահովության, առաջադիմության զգացումը:

Բայց հեքիաթային իրականությունը խորհրդային իշխանության քայքայման հետ փլուզվեց:

1988թ.-ի ծանր երկրաշարժն իսկապես ցնցեց Խորհրդային Հայաստանը: Սարսափելի իրականությունը, դաժան արհավիրքը, ողբերգական ճակատագրերը շատերին էին քարացրել, շատերին՝ մոլորեցրել, շատերին էլ համախմբել էր՝ կրելու միասնական ցավը: Մարդկանց օգնելու ցանկությունն ինձ տարավ կամավորական «Որոնում» ծառայության մեջ: Երբ մարդիկ գտնում էին կորցրած հարազատներին, մեծ երանություն էր: Ես էլ ինձ երջանիկ էի զգում, երբ կարողանում էի օգտակար լինել և օգնել՝ ինչով և ինչպես կարողանում էի…

Միաժամանակ սկսվել էր Ղարաբաղյան շարժումը. համատարած միտինգներ, Ադրբեջանից տեղահանվածներ, կամավոր ֆիդայական շարժում և ինքնապաշտպանություն, զոհված դիակներ…

Սա իրականում սոսկալի էր: Սովետական Միությունից, այսպես կոչված, «Մեծ Հայրենիքից» մնացել էր մի փոքր Հայաստան՝ թալանված ու քայքայված տնտեսություն, փախստականների ներգաղթ, համատարած գործազրկութ-

յուն, աղետի գոտի, Արցախյան պատերազմ: Ամեն ինչ տակնուվրա էր եղել:

Խավար ու մութ տարիներին լավատեսության գաղափարներն էին ինձ հույս ներշնչում: Իմ համոզմունքներն էլ հաստատվեցին ազգապահպանության, պաթետիզմի, հայ դատի գաղափարախոսությամբ: Այս խառը ժամանակներում ինձ բախտ վիճակվեց սովորելու ԵՊՀ-ի բանասիրական ֆակուլտետի հայոց լեզու և հայ գրականություն բաժնում՝ համատեղ աշխատելով Աշտարակ քաղաքի Գրիգոր Ղափանցյանի անվան միջնակարգ դպրոցում՝ որպես հայոց լեզվի և հայ գրականության ուսուցչուհի, և նույն քաղաքի մասնավոր կաբելային հեռուստատեսությունում՝ լրագրող-հաղորդավար: Նշեմ, որ երկու մասնագիտություններն էլ սիրել եմ և ժամանակին մեծ հաճույքով աշխատել եմ: Մասնագիտության բնույթից ելնելով և ժամանակի տեսանելի իրականության մեջ ապրելով՝ ներսումս ձևավորված ռոմանտիզմին հաջորդեց ռեալիզմը: Պատկերն այլ էր, մեր ժողովրդի պատմությունը նոր էտապ էր սկսել: Նախկին կոմունիստական հասարակությունը հիասթափություն էր ապրում, երբեմնի կույր գաղափարախոսությունը բերել էր խառնաշփոթ և անորոշություն:

Բոլորին անհանգստացնում էր միևնույն հարցը՝ ինչ է լինելու վաղը: Շատերն ընտրեցին արտագաղթի ճանապարհը, չնչին գումարներով ծախում էին տարիների չարչարանքով ձեռք բերված ունեցվածքը, մեկնում տարբեր երկրներ՝ «որտեղ՝ հաց, այնտեղ՝ կաց» արտահայտություններով արդարացնելով իրենց որոշումները…

ԱՄՈՒՍՆՈՒԹՅՈՒՆ, ԸՆՏԱՆԻՔ

Կյանքն, այնուամենայնիվ, շարունակվում էր. ամուսնացա:

Ամուսնական կյանքն այլ պատասխանատվության կանչեց ինձ: Ամուսինս կորցրել էր մորը, տանը ուներ հայր և տատ: Կնոջ դերն ապահովելուց բացի, ես պիտի լավ հարս լինեի և՛ ընտանիքի, և՛ ամուսնուս բոլոր հարազատների համար:

Անկեղծ ասած, մինչև օրս էլ չհասկացա՝ աշխարհի համար ի՞նչ ասել է լավ հարս լինելը: Ո՞րն է լավ հարսի չափման միավորը…

Ծնվեց մեր առաջնեկը՝ Ռուբենը, ևս մի նոր պատասխանատվություն: Դեռ մայրության բերկրանքը չվայելած՝ մայրս հիվանդացավ: Ոտքերիս տակ ամեն ինչ սահում էր: Նման իրավիճակում էլ մխիթարվում ես, երբ նայում ես շուրջդ և համոզվում, որ ավելի դաժան բաներ են լինում: Այս անցուդարձի մեջ ամենասարսափելին այն է, երբ կորցնում ես հուսալի մարդկանց, որոնք քեզ նեցուկ են և պաշտպանվածություն են ներշնչում: Մահացավ ամուսնուս հայրը, հետո՝ մայրս: Մի կողմից՝ ողբերգության զգացումը, մյուս կողմից՝ սոցիալական դժվարությունները. երկրի անկայուն վիճակն իսկապես անհանգստություն էր բերում:

Ամուսինս այդ դժվար տարիներին՝ 90-ականներին, աշխատում էր Երևանում, տրանսպորտի նախարարությունում՝ որպես ինժեներ, ես էլ, ինչպես վերը նշեցի, աշխատում էի դպրոցում և կաբելային հեռուստատեսությունում: Փորձում էինք մեր իսկ ձեռքերով հոգալ մեր կարիքները, բայց՝ ապարդյուն…

Կային մարդիկ, ովքեր օգնում էին մեզ, բայց երբեմն դա այնքան էր նվաստացնում մեզ, նույնիսկ կախվածության մեջ էր պահում:

Ծնվեց մեր երկրորդ տղան՝ Գոռը, նրա ծնունդով ինչ-որ նոր հույսեր, սպասելիքներ ունեի, բայց կամաց-կամաց փշրվում էին բոլոր երազանքները: Հիասթափությունը գագաթնակետին հասավ, երբ անապահովությունից բացի, սկսվեցին շատ անհամաձայնություններ իմ և ամուսնուս միջև: Պատճառները տարբեր էին և գրեթե ամեն խոսակցություն ավարտվում էր ամուսնուս դժգոհ արտահայտություններով և իմ արցունքներով: Ցավալին այն է, սիրելի՛ ընթերցող, որ շատերի նման, ես էլ այդ պահերին անիծում էի իմ ծնունդը, իմ ճակատագիրը, ու ինձ թվում էր, որ նյութական ապահովությունը կվերականգներ մեր կիսավեր ընտանիքը: Հատկանշական է, որ՝ ինչպես յուրաքանչյուր հայ ընտանիք, փորձում էինք արտաքին շղարշով ծածկել մեր իրական վիճակը՝ դրսիններին և մեզ համոզելով, կարծես ամեն բան կարգին է: Որովհետև՝ **ինչպես շատերը, այնպես էլ մենք, ապրել ենք մի շատ սխալ գաղափարով՝ փորձել ենք հաշիվ տալ բոլորին, բացի մեկից՝ Բարձրյալ Աստծուց:**

ԱՆԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆԻՑ ՈՒ ԱՆՈՐՈՇՈՒԹՅՈՒՆԻՑ ԴԵՊԻ ԵՐԱԶԱՆՔՆԵՐ

Փնտրտուքների մեջ մեր ընտանիքում ծնվեց Եվրոպա մեկնելու ցանկությունը: Ցանկություն, որ բերում է լավ ապրելու պատկերը ոչ միայն նյութական ապրուստի, նաև կենցաղային խնդիրների բարելավման:

Երկրից դուրս գալու փափագը բորբոքվում էր հատկապես, երբ լսում էինք երկրից դուրս եկածների հաջողությունների մասին: Անցնելով գործնական քայլերի՝ տան եղածները ծախելով, բավականին պարտքեր կուտակելով, 1998թ.-ի հոկտեմբերին ես, ամուսինս և երկու անչափահաս երեխաներս մեկնեցինք Գերմանիա:

Մի նոր աշխարհ՝ բոլոր առումներով: Կամաց-կամաց երբեմնի մեռած երազանքները կրկին կենդանանում էին: Այստեղ արդեն ինձ առաջնորդում էր մեր ձեռքերով վաստակելու սկզբունքը. այն, ինչ կորցրել ենք, վերականգնենք, մեզ ապահովենք, ստեղծենք, ունենանք... Ի սկզբանե նպատակ չենք ունեցել հիմնավորելու, այլ ունեցել ենք որոշում՝ ապրել, վայելել, ստեղծել, որ վերադառնալուց հետո ամոթով չմնանք, շատերին էլ լռեցնենք, ապացուցելով, որ մենք էլ կարող ու ընդունակ ենք լավ ապրելու, որովհետև իրական կյանքում դա իսկապես հեղինակություն ու պատիվ է բերում: Որովհետև քո հագածը, քո կերածն է որոշում ով լինելդ: Գերմանիայում ապրելու տարիներին փորձել ենք մեր հարազատներին օգնել՝ ինչով և ինչպես կարողացել ենք, մասնավորապես նրանց,

ովքեր մեզ ձեռք էին մեկնել: Փոխհատուցել ենք իրենց արածների դիմաց, մեր պատկերացմամբ դեռ մի բան էլ ավելի: Սա էլ աշխարհի սկզբունքներից մեկն է՝ դու՝ ինձ, ես՝ քեզ…

Գերմանիայում ապրելու տարիներին ձեռք բերեցինք նոր ընկերներ՝ հայ և գերմանացի, նաև՝ հրաշալի հաջողություններ… Մեծ տղաս՝ Ռուբենը, դյուդոյի առաջնությունում ձեռք էր բերել բազմաթիվ պատվոգրեր, գավաթներ ու մեդալներ, դպրոցում էլ 4 տարի շարունակ սովորել էր գերազանց առաջադիմությամբ, որոնց մասին նույնիսկ տեղական թերթերն էին արձագանքել:

Այդ ընթացքում շատ մտքեր փոխվեցին իմ մեջ: Այդ երկրում ես տեսա, թե ինչքան հասարակ են մարդիկ իրենց ունեցած հնարավորության համեմատ: Անկախ քո կատարած աշխատանքից՝ քեզ հարգում են և գնահատում որպես մարդ: **Այդ ընթացքում իմ մեջ ձևավորվում էր հումանիզմը, մարդուն որպես մարդ գնահատելու, արժևորելու գաղափարը, իհարկե հետո համոզվեցի, որ սա էլ շատերին տանում է ծայրահեղության, մարդն է դառնում «պաշտամունքի» առարկա:**

Ինչևէ, ապրելով հայրենիքից դուրս, կարոտը, մեր ծրագրերը նաև շատ հանգամանքներ տուն էին կանչում:

ՎԵՐԱԴԱՐՁ ՀԱՅՐԵՆԻՔ

2003թ.-ի գարնանը ընտանիքով կամավոր վերադարձանք Հայաստան՝ մեր ստեղծածը վայելելու, հայրենիքում ապագան կերտելու ցանկությունով: Ուզում էինք, որ մեր փոքր տղան՝ Գոռը, անպատճառ Հայաստանում առաջին դասարան հաճախեր:

Ավա՜ղ, ամեն բան մեր ծրագրածի պես չէր: Շատ բան էր փոխվել մեր երկրում և՛ լավ, և՛ վատ առումներով... Այնուամենայնիվ, փորձեցինք հարմարվել:

Սկսեցինք տան վերանորոգման աշխատանքները: Սրտի թրթիռով երազում էինք արագ ավարտին հասցնել, կահավորել, հունի մեջ ընկնել: Այս ամենին զուգահեռ, ամուսինս շինարարության մեջ վարպետացած, սալիկապատման գործը շարունակեց հայրենիքում:

Տարբեր անհամաձայնություններ և տարաձայնություններ սկսվեցին մեր հարազատների միջև: Երբ դու խեղճ ես, անոթի, գուցե շատերը քեզ խղճան ու ձեռք մեկնեն, ոմանք՝ ուղղակի օգնելու, ոմանք՝ իշխելու պահանջատիրական ցանկությունով և ապագայի մեծ ակնկալիքներով, և փորձեն անընդհատ հիշեցնել, թե ի՞նչ նվիրյալներ են և ինչ՞ եր են արել քեզ համար՝ երբեք չհիշելով քո արածները, չգնահատելով և ոչ մի բան: Իսկ երբ փորձում ես պաշտպանել քեզ և այն, ինչը համարում ես, որ քոնն է, դառնում ես նյութապաշտ: Ավելին՝ «օրակարգում» մեր ընտանիքի բաժանության հարցն էր...

Երբ ապրուստի միջոցները փոքր ինչ բարելավում են, ինչպես մեզ մոտ էր Գերմանիայի վերադարձից հետո, շրջապատի չարությունը ակնհայտ է, հատկապես, որ այլևս չես ենթարկվում իրենց «պիտի»-ներին: Շատերն էին նյարդայնանում՝ տեսնելով ամուսնուս հարգալից և ջերմ վերաբերմունքը իմ նկատմամբ: Շատերի համար էլ տարօրինակ էր, երբ զուտ ընտանեկան հարցեր այլևս լուծում չէին գտնում ավանդական-հարազատական կլոր սեղանի շուրջ: Ամուսիններով գրեթե ամեն հարցի շուրջ համաձայնում էինք, որն էլ բարկություն էր բերում: Բարեկամների մեջ էլ, երբ անհաշտություններ կամ անհաջողություններ էին լինում, չգիտես՝ ինչու, միշտ մեղավորը մենք էինք:

Սիրելի՛ ընթերցող, սա գրում եմ, որովհետև համոզված եմ, որ շատերդ հենց այս խնդիրներն ունեք ձեր ներսում, ինչպես՝ ես: Հավատացե՛ք, այս քայքայիչ հանգամանքները թույնով լցրել էին իմ ներսը և դառն արմատներով հաստատվում էին իմ մեջ: Սկզբում ինձ թվում էր, որ կարող եմ նման երևույթները արհամարհել և հանգիստ ապրել, բայց դրանք խաբկանք էին ու նոր հիասթափություն: Հոգեբանական ամեն տարբերակ կիրառում էի, որ ես կարող եմ, պետք է ամեն բանի սթափ նայել և ինքս իմ մեջ պայքարում էի՝ բոլոր իրավիճակները անձամբ վերահսկել: Բայց այդ պայքարն ավելի շատ քայքայում էր, քան՝ վերականգնում: Եվ դա տևեց այնքան ժամանակ, մինչև որ խոստովանեցի, որ այլևս չեմ կարող… և հանձնվեցի Նրան՝ Ով կարող է…

Երբ ներսումդ կա ընդդիմություն, այն դառնում է ակնհայտ: Շատերին բացահայտ էի հակադրվում, որովհետև հոգնել էի այն կեղծ դիմակից, որ հաճախ հագնում ենք մարդկային բարեկամական փոխհարաբերությունների ժամանակ: Շատերի հետ էլ չէի ուզում առնչվել, հաճախ էլ զբաղվում էի ինքնարդարացմամբ, պատճառներ և մեղավորներ էի փնտրում ամենուր և ամեն ժամ: Սա իրականում այն պահն է, որ այլևս դու չես իշխում իրավիճակի վրա, այլ իրավիճակը՝ քեզ վրա: Բարկությունն ինձ ուղեկցող ռեակցիան էր, տեղի, անտեղի այն թափում էի երեխաներիս վրա, նյարդերս տեղի էին տալիս ամուսնուս հետ ունեցած գրեթե ամեն խոսակցության ժամանակ: Մեր ժամանակների լեզվով «դեպրեսիա» կոչվածը բռնել էր ինձ: **Մտքում համոզված էի՝ եթե Հայաստանից կրկին դուրս գանք, իրավիճակը կփոխվի, առանց հասկանալու, որ աշխարհագրական տեղն ու դիրքը չէ, որ հոգուդ անդորր է բերում, այլ Նա՝ Ամենակալը, Ով այդ հոգին դրել է քո ներսում:**

Այդ տարիներին մեր գերմանացի ընկերներն այցելեցին մեզ՝ Հայաստանը տեսնելու ցանկությունով և ավելի մոտիկից ճանաչելու երկիրը, որի մասին շատ-շատ էինք պատմել: Մի շատ հիանալի բիզնես-ծրագիր առաջարկեցին: Ունենալով համապատասխան պայմաններ և միջոցներ՝ կարող էինք միասին կազմակերպել տուրիստական ծառայություններ՝ Եվրոպայից Հայաստան:

Իրենց իսկ ֆինանսական աջակցությամբ, շատ գրավիչ հնարավորություն՝ հաստատվելու Հայաստանում: Բայց իմ

ներսում, ինչու չէ նաև իմ ամուսնու ներսում սառել էր Հայաստանում որևէ նոր բան ձեռնարկելը, որովհետև նա էլ շատ նյարդային էր դարձել և փորձում էր ալկոհոլով մեռցնել իրական հիասթափությունը:

Եթե տարիներ առաջ նյութական անբավարար վիճակն ու կարիքը մեզ ստիպեցին դուրս գալ Եվրոպա, այս անգամ արդեն՝ մարդկային հարաբերությունները, անհաջողությունները և, ուղղակի, բոլորից հեռու հանգիստ կյանքով ապրելու և աշխատելու միտքը:

Երբ նորից ձեռնարկեցինք Հայաստանից դուրս գալու գործերը, շատերն ապշած էին, որ տան համար ձեռք բերված այդքան տեխնիկան, կահույքները կրկին վաճառում ենք, կրկին պանդխտության ճանապարհն ենք բռնում: Քույրերս նույնիսկ ինձ նախատում էին. «Ոսկե ձկնիկի պատմությունն է, էլ ի՞նչ ես ուզում, ամեն բան ունես վայելելու, հանգիստ ապրելու…»: Բայց իրականում ինձ համար այլևս ոչ մի բան արժեք չուներ, որովհետև ես կորցրել էի խաղաղությունս: Ժամանակին ձեռք բերվածը, երբեմնի փափագած կարողությունը այլևս ոչինչ էին: Հատկապես հորս մահից հետո (նա սրտի կաթվածից մահացավ) ինձ համոզում էի, որ այլևս ոչինչ չունեմ այստեղ, մանավանդ երբ ականջներիս անընդմեջ հնչում էին կյանքի վերջին րոպեներին սիրող հոր խոսքերը. «Գնա՛, բալե՛ս, էլ մնում ես՝ ի՞նչ անես…»: Հայրս շատ լավ էր տեսնում իմ անհաշտությունը մեր վերադարձի հետ կապված, նաև զգում էր կրկին մեկնելու, հեռանալու մեծ փափագս…

ՓԱԽՈՒՍՏ

Ես փախչում էի, բայց ումի՞ց, ինչի՞ց. տնի՞ց, ծննդավայրի՞ց, հայրենիքի՞ց, հարազատների՞ց, բարեկամների՞ց, հարևաններ-ի՞ց, ծնողներիս գերեզմանների՞ց: Այս հարցերն ինձ տանջում էին…

Ես փախչում էի… ինքս՝ ինձնից…

Գրեթե երկու տարի Հայաստանում պայքարելուց հետո հայտնվեցինք Իսպանիայի Բարսելոն քաղաքում: Հրաշալի մի տեղ, որի գեղեցկությունն էլ չէի կարողանում նկատել, որով-հետև միտքս խավար էր, որովհետև կուրացած էի մտքով, հոգով, սիրտս էլ իրականում ներքին ցավից ազատագրվելու կարիք ուներ: Ներսս ամայացած էր: Տեղափոխվելուց հետո խառը մտքերն ինձ հանգիստ չէին տալիս. ինչո՞ւ այդպես դա-սավորվեց ու շատ ինչուներ… **Ու գիտե՞ք ինչն է հետաքրքիր, որ նման իրավիճակում մենք սկսում ենք փնտրել մեղա-վորներ, խանգարող մարդիկ ու միջոցներ, բայց հաստատ այդ ցուցակի մեջ մենք մեզ չենք տեսնում:** Բարսելոնում էլ հեշտ չէր՝ նոր շրջապատ, նոր լեզու, նոր մշակույթ, որն ամ-բողջությամբ տարբերվում է գերմանախոս երկրների մշա-կույթից, ապրելակերպից: Եթե Գերմանիայում ապրում էինք՝ ինչ գնով լինի վաստակենք, ձեռք բերենք, ստեղծենք, ուղար-կենք Հայաստան, որ գնանք և վայելենք, ապա Իսպանիայում այդ տենդենցը փոխվել էր. ետ գնալն այլևս մեզ համար փակ-ված էր, ուստի և մեր նպատակը Եվրոպայում հաստատվելն

էր: Ինձ թվում էր, որ Եվրոպական անձնագիրը կփոխեր իմ և իհարկե իմ ընտանիքի կյանքը:

Հիասթափություն հայրենիքից, վիրավորվածություն մարդկանցից, չգնահատվել ու անարգվել մտերիմ բարեկամներից: Մի խոսքով, մերժվածության հոգին ոչ միայն բռնել, այլև իշխում էր ինձ: Իմ փնտրտուքները Բարսելոնում էլ ապարդյուն էին: Գրեթե նույնը, դեռ մի բան էլ ավելի վատ, **եթե քո երկրում դու ես ընտրում, թե ում հետ շփվես, հարաբերվես, ապա օտար երկրում դա քո ընտրությունը չէ:** Կամա թե ակամա շփվում ես տարբեր բնավորությունների հետ, հայտնվում ես տարբեր իրավիճակներում, որոնց մասին երբևէ չես էլ պատկերացրել:

Կրկին կռիվ, կրկին անհամաձայնություն, այս անգամ ցանկությունը մեծ էր Ավստրիա գնալու, այնտեղ ունեինք շատ լավ ընկերներ, դեռ Գերմանիայից ճանաչում էինք իրար, վատ ու լավ օրեր միասին էինք անցկացրել, միասին էինք կիսել և՛ ուրախություն, և՛ տխրություն:

Հիշողությունները, ինչու չէ նաև գերմաներենի իմացությունը և երեխաների լավ ապագայի նկատմամբ հեռանկարն այս անգամ մեզ բերեցին Ավստրիա:

ԱՊԱՍՏԱՆ

Ինձ թվում է, որ դու, սիրելի՛ ընթերցող, այս ընթացքում հասցրիր նկատել, որ երկրից երկիր տեղափոխվելու գործընթացն արդեն սովորական բան էր դարձել մեզ համար: Մեր տղաները չէին հասցնում նույն համադասարանցիների հետ երկար ժամանակ շփվել: Միևնույն ժամանակ ամեն նոր կարգավիճակում փորձել ենք հարմարվել ամեն բանի հետ, բայց ոչ՝ Հայաստան վերադարձի…

Ավստրիայում, ի տարբերություն Իսպանիայի, մենք փախստականի կարգավիճակ խնդրեցինք երկրի իշխանություններից: Ավելացավ հոգեբանական մի նոր ծանրություն. Էլ ավելի անմխիթար նկարագրել մեր վիճակը, պատճառները երկրից դուրս գալու և Ավստրիայում ապաստան խնդրելու: Սարսափելի է, երբ դու քեզ համար կերտում ես մի աշխարհ, ստի թագավորություն և կամավոր ապրում ես դրա մեջ: **Ես ապրում էի մի կյանքով, որը միևնույն ժամանակ և՛ իմն էր, և՛ իմը չէր…** Հոգեկան ճնշումների հետ համատեղ ֆիզիկական գերբեռնվածությունը տանում էր մի համոզման, որ ես եմ ընտրել այս ճանապարհը, ես էլ պիտի անցնեմ: Ինձ համար արդեն սովորական էր դարձել տուն, հյուրանոցային սենյակներ մաքրելը, խոհանոցային ամեն աշխատանք անելը: Ամուսինս էլ ունենալով ձեռքի լավ շնորհք՝ վարպետացել ու հմտացել էր շինարարության մեջ: Ավստրիայում մի բան ավելի հեշտ էր:

Դեռ Գերմանիայում սովորած գերմաներենի իմացությունը օգնեց արագ աշխատանք գտնելու: Մեծ տղաս՝ Ռուբենը, ունենալով տարրական դպրոցի գերազանց գնահատականներ, արագ տեղավորվեց միջնակարգ դպրոցում, իսկ փոքր տղաս՝ Գոռը, տարրական դպրոցում: Թվում էր, թե ամեն բան այնքան հրաշալի էր: Այդ հրաշալի կոչվածը նման է այն ձեռակերտ պալատին, որ հազիվ թե թղթի կտորներով փորձում ես հավաքել, բայց աննշան մի շարժում, և այն կարող է հողին հավասարվել:

Ամեն բան հրաշալի է կյանքում այնքան ժամանակ, երբ բթացած իրավիճակում ինքդ քո ներսում, քո ուժերով փորձում ես դա քեզ ուղղակի համոզել…

Ինքս ինձ մխիթարելով, որ Ավստրիայում ենք, կապ էի գտնում Գերմանիայում ապրած տարիների հետ, տրամադրվում էի, որ լեզուն քիչ թե շատ գիտենք, կարող ենք ինտեգրվել, հաստատվել և վերագտնել մեզ:

Ամուսիններով գրանցվեցինք «Volkshilfe»-ում որպես թարգմանիչներ: Դա փախստականների հարցերով զբաղվող սոցիալական կազմակերպություն է, որն իրականացնում է կազմակերպչական հարցեր: Այդտեղ պետք չէ մասնագիտական մեծ հմտություն, հայերեն-ռուսերեն-գերմաներեն քիչ թե շատ իմացությունը մեզ բավարարում էր, ձեռք էինք բերել նաև մեծ վստահություն աշխատակազմի կողմից, որն ավելի էր կարևորվում: Դե, բնական է, այդ ընթացքում շփվում ես տարբեր մարդկային կյանքերի, ճակատագրերի հետ և ունենում տարբեր հարցեր:

ԲԱՐԻ ՍԵՐՄԸ

Գրեթե ութ ամիս ապրեցինք փախստականներին հատկացված հանրակացարանում, որտեղ կարող ես հանդիպել տարբեր ռասայի, ազգերի, կրոնական հարանվանությունների մարդկանց՝ իրենց բնորոշ նիստ ու կացով, ավանդություններով: Փախստականներին հաճախ էին այցելում հավատացյալներ, ովքեր գրքույկներ, DVD-ներ, քաղցր շոկոլադներ էին բաժանում նաև երգում և երեխաների հետ խաղեր էին անցկացնում: Այդպիսի մի այցելությունից հետո մեր փոքրիկ սենյակում էլ հայտնվեց Հիսուսի մասին պատմող ֆիլմը, Ղուկասի Ավետարանի ընթերցանությունը, գերմանացի ավետարանիչ Վիլհելմ Բուշի «Հիսուսը՝ մեր ճակատագիրը» գրքույկը, բոլորն էլ հայերենով:

Իմ առաջին արձագանքը շատ նյարդային ու ջղագրգիռ արտահայտություն էր. «Սրանք Եհովայի վկաներն են, դուրս շպրտեք՝ ինչ-որ կա...»: Չգիտես՝ ինչու, այսօր էլ հավատացյալ բառի տակ շատերն են սխալ պատկերացում կազմում ու շատ հետևություններ անում, ինչպես՝ ես, բայց ամուսինս շատ հանգիստ պատասխանեց. «Ո՛չ, հաստատ Եհովայի վկաներ չեն, քրիստոնյաներ են, նրանց տված նյութերը, երգերը Հիսուսի մասին են վկայում, ֆիլմն էլ բոլորս տեսել ենք»:

Հետաքրքրությունս շատ շարժեց հատկապես «Հիսուսը՝ մեր ճակատագիրը» փոքրիկ, դեղին գրքույկը, որն առաջին հայացքից այդքան էլ գրավիչ չէր, բայց հենց բովանդակութ-

յան բաժնում հանդիպեցի այնպիսի վերնագրերի, որոնք իրականում ինձ համար անհանգստացնող հարցեր էին:

Դրանցից մի քանիսը, սիրելի՛ ընթերցող, համոզված եմ, որ քեզ էլ կհետաքրքրի՝ «Աստվա՞ծ, այո, բայց ինչո՞ւ Հիսուս», «Ինչո՞ւ ես ապրում», «Ի՞նչ ենք անելու…», «Ինչպե՞ս վարվենք, երբ մարդիկ նյարդայնացնում են մեզ…», «Ամեն ինչ պետք է փոխվի, բայց ինչպե՞ս»: Հավատացած եմ, որ հենց այս պահին քո մտքերն էլ այս հարցերի ուղղությամբ շարժվեցին, որովհետև այսօր յուրաքանչյուր մարդ այս և նման շատ հարցերի պատասխաններ է փնտրում:

Փնտրտուքների, դեգերումների մեջ լինելով՝ այդ օրերին ես շատ էի առանձնանում, ինքս ինձ հետ խոսում, խնդրում էի Աստծուն՝ ինչպես գրեթե բոլորը: Անհանգստությունը, անորոշությունը, խառը մտքերը կրծում էին սիրտս: Ներքին տագնապ կար ներսումս, չնայած նրան, որ թվացյալ ամեն ինչ կարգին էր: Առօրյա իրականությունից հոգնած ու տրտմած՝ մեր չբավարարված հոգիները զվարթացնում էինք մեր ընկերների հետ հաճախակի հանդիպումներով:

Ամբողջ շաբաթն աշխատում էինք: Շաբաթ և կիրակի օրերին փորձում էինք միասին ժամանակ անցկացնելով՝ լիցքաթափվել: Օգտվում էինք ժամանցի գրեթե հնարավոր միջոցներից և թվում էր, թե դա կօգնի ինձ ազատագրվելու այն խավարից, որն ինձ միշտ հետապնդում էր: Հոգիս ձգտում էր լույսին, բայց միտքս հաստ շղթաներով կապված էր: Ամեն բանից արագ հիասթափվում էի և նորն էի փնտրում: Հոգնել էի մարդկային բոլոր մտքերից ու դոգմաներից: Մարդկանց

ասեկոսեները, տարբեր անհաճո շարժառիթներն արագ հունից հանում էին ինձ: Դարձել էի շատ ջղային և դյուրագրգիռ: Այս ամենին հետևում էին իմ բարձրաձայն գոռոցները երեխաներիս վրա՝ նկատողության տեսքով, կամ էլ առանձնանում էի և սկսում լաց լինել՝ անիծելով իմ ճակատագիրը: Այսօր այս երևույթներին բժշկությունը կոչում է դեպրեսիա: Ես էլ անպակաս չմնացի այդ ախտորոշումից: Այցելում էի հոգեթերապևտի մոտ, ունենում էինք զրույցներ: Ինձ թվում էր՝ ահա շուտով ամեն ինչ կրկին իր տեղը կընկնի, բայց ավա՜ղ, ներսումս սկսել էր աճել դժգոհությունը, ամեն առավոտ ես զզվանքով էի արթնանում, տգեղ արտահայտություններով սկսում օրս, թե՛ աշխատավայրում, թե՛ տանը ամեն բացասական երևույթ իշխում էր ինձ վրա, և ցավալին այն էր, որ ամեն հոգս փորձում էի ուսերիս վրա տանել: Ամեն երեկո պարտավորություններս ավարտին հասցնելով (աշխատանքը, տան մաքրությունը, ճաշը, լվացքը, արդուկը)՝ ուժասպառ նստում էի հեռուստացույցի առջև՝ հետևելու սերիալներին: Փորձում էի գլխավոր հերոսուհու կյանքը իմը դարձնել՝ սին սպասելիքներով: **Հիմա արդեն ծիծաղելի է թվում. ինչպե՞ս կարող է ուրիշի կյանքը քոնը դառնալ, երբ Աստված քոնը քե՛զ է տվել:**

ՀԱՐՑԵՐ ԵՎ ՆԵՐՔԻՆ ՊԱՏԵՐԱԶՄ

Նշեմ, որ ամեն օր, քնելուց առաջ շարունակում էի կարդալ «Հիսուսը՝ մեր ճակատագիրը» գիրքը: Մի օր էլ, երբ հանդիպեցի «կնքված նապաստակներ» արտահայտությանն ու դրա բացատրությանը, սկսեցի լուրջ մտածել: Բացատրությունը նշում եմ բառացի սույն գրքից. «Եթե նապաստակին բռնեք դաշտից ու բերեք, կնքեք, միևնույն է, նա կրկին դեպի դաշտ կփախչի...»: Մեկնությունը վերաբերում էր այն «քրիստոնյաներին», ովքեր լավ «եկեղեցականներ» են՝ Սուրբ Ծննդին, Հարության տոնին եկեղեցի են գնում, շատ սիրալիր բարևում են քահանային և անհաճո ոչինչ չեն անում: Սա իսկապես խորը քննելու տեղիք տվեց և տպվեց իմ ուղեղում: Սիրելի՛ ընթերցող, «կնքված նապաստակներ» արտահայտությունը այն առաջին սերմերից էր, որ ցանվեց իմ ներսում, որտեղ շատ տատասկ ու փուշ կար... Ես էլ դրանցից մեկն էի...

Հետո նույն գրքում հանդիպեցի, որ միայն Աստծո զավակները կարող են ճիշտ աղոթել: Սկզբում դա ինձ շատ զայրացրեց, որովհետև ինձ թվում էր, որ աղոթելը միայն քո ցանկությունները, կարիքները Աստծուն հայտնելն է կամ էլ «Աղոթագրքերից» ինչ-որ բան անգիր ասելը: Միայն ավելի ուշ հասկացա, որ աղոթքը անկեղծ զրույց է, ջերմ, մտերիմ, կենդանի շփում ու հարաբերություն Հոր հետ, Որդու հետ, Սուրբ Հոգու հետ և միայն ու միայն Հիսուսի անունով (տե՛ս Հովի. 14.13,14, 15.16, 16.23,24):

Միայն հետո հասկացա, որ աղոթքը մենախոսություն չէ, այլ՝ երկխոսություն, և պիտի լսելու ականջ ունենանք՝ լսելու Նրան: Գիրքն ընթերցելու ժամանակ բազմաթիվ հարցեր էին ծագում իմ ներսում, հատկապես, որ հեղինակը շատ էր կարևորում Հիսուսի անունը կանչելը, քրիստոնյայի համար «Աստվածաշնչի» ընթերցման կարևորությունը, Աստծո հետ հաշտվելը՝ Նրա միածին Որդուն՝ Հիսուսին մեր անձնական կյանքում ընդունելով և Նրան Տեր ու Փրկիչ դավանելով (տե՛ս Հռոմ. 10.8-10):

Լինելով հայոց լեզվի և հայ գրականության ուսուցչուհի՝ Աստվածաշնչից ծանոթ էի Նոր կտակարանին և Առակաց գրքին: Որոշ թեմաներ անցնելիս՝ Ծաղկազարդի, Հարության տոնի հետ կապված, նույնիսկ մեջբերումներ էին անհրաժեշտ, որոնք մեծ պաստառներով տեղ էին գտնում դասասենյակի պատերին: Սակայն հետո միայն հասկացա, որ այս ամենը զուտ գիտություն է, եթե Հիսուսը չբնակվի մեր ներսում, և մենք էլ չկենանք նրանում (տե՛ս Հովհ. 15.7):

Սիրելի՛ ընթերցող, գուցե դու էլ այս պահին, ճիշտ ինձ նման, չհաշտվես այս մտքերին, բայց մի՛ շտապիր, ուզում եմ հասնել այնտեղ, թե երբ վերջապես այս ամենը ծակվող փուչիկի պես պայթեց իմ ներսում: Զինվի՛ր համբերությամբ, որովհետև այն, ինչ պիտի գրեմ, առաջին հայացքից կթվա ուղղակի ինքնակենսագրական տխուր էջեր, բայց իրականում ցանկությունս ոչ թե իմ վիճակը շատ ծանր ներկայացնելն է, այլ հստակեցնելու այն զգալի տարբերությունները, որ ես վերապրեցի: Գոնե իմ անձնական կյանքով ես հասկացա,

որ ինչքա՛ն մեծ տարբերություն կա Հիսուսի մասին լսելու և Նրան իրապես ճանաչելու միջև: Ինչքա՛ն մեծ տարբերություն կա Հիսուսին միայն գմբեթավոր տաճարներում փնտրելու և Նրա կենդանի խոսքը լսելու ու կատարելու միջև: **Ինչքա՛ն մեծ տարբերություն կա քրիստոնեությունը որպես կրոն ընդունելու, ժառանգելու և Հիսուս Քրիստոսին որպես անձնական Տեր ու Փրկիչ ընդունելու միջև:** Ինչքա՛ն մեծ տարբերություն կա եկեղեցու պատմություն գիտենալու և Ավետարանի իրական հայտնության, արթնության միջև: Ինչքա՛ն մեծ տարբերություն կա վերացական, անգիր աղոթքների և քո սրտից Հիսուսի հետ կենդանի շփման ու հաղորդակցության միջև: Ինչքա՛ն մեծ տարբերություն կա զուտ ավանդույթներին, սովորույթներին հետևելու և մեռելներից հարություն առած կենդանի Աստծո Խոսքին ու կամքին հետևելու միջև: Եվ, ի վերջո, ինչքա՛ն մեծ տարբերություն կա զուտ հավատալու այն եռամեկ Աստծուն՝ Հորը, Որդուն և Սուրբ Հոգուն, Ով Ինքն Իրեն հայտնում է Իր իսկ Խոսքում՝ Աստվածաշնչում, և ուղղակի աստվածաբանության միջև: Նպատակս մեկն է՝ մեռած հավատքից դառնալ կենդանի հավատքին… (տե՛ս Բ Պետր. 1.19):

ԱՆՍՊԱՍԵԼԻՆ՝ ՍՊԱՍՎԱԾ

2008թ.-ի օգոստոս ամիսն էր: Ավստրիայում սկսվել էր օտարազգիների արտաքսման մի լայնածավալ ծրագիր: Անկախ ամեն բանից, կար հրաման՝ բոլորի դիմումները մերժել և ետ ուղարկել: Մեծ ահ ու վախ էր պատել ինձ: Աշխատելով որպես թարգմանչուհի՝ անմիջապես համապատասխան ծառայություններից ճշտեցի մեր ընտանիքի կարգավիճակի մասին, օրն ուրբաթ էր, 2008թ.-ի սեպտեմբերի 5-ը: Իրավաբանական հարցերով զբաղվողը ինձ շատ հանգստացրեց՝ նշելով, որ ամեն բան կարգին է, մենք ինտեգրված ընտանիք ենք և կարիք չկա տագնապելու:

2008թ.-ի սեպտեմբերի 8-ն էր, օրը երկուշաբթի, նոր ուստարվա առաջին օրը, առավոտյան ժամը 6-ին լսվեց դռան զանգը: Ամուսինս շտապեց դուռը բացելու, չէի հասցրել անկողնուցս վեր կենալ, երբ ութ ոստիկան ներս մտան՝ ձեռքներին մեր ընտանիքի արտաքսման որոշման թղթերը, և մեզ կարգադրեցին հավաքվել ու հետևել իրենց: Սկսվեց իրարանցում. իմ վայնասունը, ամուսնուս անհանգստությունը նման էին քաոսի: Փոքր տղաս այդ տարի պիտի գիմնազիայի առաջին դասարան գնար՝ տարրական դպրոցից հետո: Նա այդ պահին բարձրաձայն լաց էր լինում ու ափսոսում, որ էլ չի կարող: Մեծ տղաս իրեն զսպում էր, բայց հուզմունքն արդեն վկայում էր իրավիճակի հետ նրա անհամաձայնության մասին:

Հետևեցինք ոստիկաններին, 3-րդ հարկից իջնում էինք աստիճաններով, ամեն մեկիս հսկում էր 2 ոստիկան՝ աջ և ձախ

կանգնած, փախուստն անհնարին էր: Այդ անսպասելի և անցանկալի իրավիճակում, յուրաքանչյուր աստիճանի վրա ոտք դնելով արտասվախառն կանչել եմ՝ «Հիսո՛ւս, օգնի՛ր…»: **Ուզում եմ նշել, որ միշտ էլ դժվար և անհանգիստ ժամանակներում Աստծուն օգնության կանչել եմ, խնդրել եմ, բայց այս անգամ իմ բերանից դուրս եկավ «Հիսո՛ւս, Հիսո՛ւս…» անունը: Թերևս հետո հասկացա այդ անվան մեծ կարևորությունն ու զորությունը (տե՛ս Փիլիպ. 2.9, Հովհ. 16.24):**

Մեզ տեղափոխեցին Ֆոկլաբրուկ քաղաքի ոստիկանություն, այնտեղից պիտի տեղափոխեին Վիեննա և հենց նույն օրվա Վիեննա-Երևան չվերթով արտաքսեին Հայաստան: Միակ բանը, որ ամուսինս հասցրեց անել այն էր, որ մեզ հետ պատահածը հեռախոսով արագ տեղեկացրեց «Volkshilfe» կազմակերպության աշխատակցուհուն, նաև՝ մեզ ճանաչող ավստրիացի մի քանի ծանոթների:

Մինչ ոստիկանությունում սպասում էինք իրենց կողմից կանչված թարգմանչին, վերը նշված մարդիկ արագ հասցրին գալ և պաշտպանել մեր իրավունքները թե՛ իրավաբանական, թե՛ մարդկային բոլոր կողմերով, մասնավորապես նշելով մեր օրինապահ և ինտեգրված լինելը, երեխաների առաջադիմությունը և կարգապահությունը: Իսկ ոստիկանները նշում էին, որ սա վերևից հրաման է, դիմում-հայցը մերժվել է և այլ բան չի մնում անելու…

Այդ ընթացքում ինձ մոտ ցնցումներ սկսվեցին, ու քանի որ ես որոշ դեղահաբեր էի ընդունում և չէի հասցրել ինձ հետ վերցնել, խնդրեցի, և ոստիկանները տղայիս հետ տնից բե-

ռեցին: Թե՛ դեղահաբերը, թե՛ իրենց իսկ բժշկի ներարկումը չօգնեցին, վիճակս հետզհետե վատացավ: Մարմնիս ձախ հատվածն ամբողջությամբ ջղաձգվել էր, ձեռքս չէր շարժվում, չէի կարողանում շնչել: Առաջին հայացքից ոստիկաններին դա լուրջ չէր թվում և նույնիսկ ծաղրում էին՝ վերագրելով թատրոնի: Բայց երբ այդ ամենը երկար տևեց, հենց իրենք շտապ օգնություն կանչեցին և իրենց իսկ հսկողությամբ տեղափոխեցին Ֆոկլաբրուկ քաղաքի հիվանդանոց, որտեղ արձանագրվեց նախակաթվածային նշաններ, շոկ, նյարդային համակարգի գերլարվածություն: Հիվանդանոցում այլ բան չեմ հիշում, միայն այն, որ ընդունող բժիշկը, ով ազգությամբ արաբ էր, ոստիկանին դուրս հրավիրեց ընդունման սենյակից՝ նշելով իրավիճակի լրջությունը: Ինձ հանգստացնող ներերակայինով հանեցին այդ վիճակից: Արթնացա և անհանգիստ լուրի էի սպասում ընտանիքից: Ամուսինս եկավ ու ասաց, որ արտաքսումը որոշ ժամանակով դադարեցրել են, մինչև իմ վիճակը կկարգավորվի: Ամեն բան անորոշ էր, տագնապն ու վախը պատել էին ինձ, մեկ ամիս շարունակ մնացի հիվանդանոցի հոգեթերապիայի բաժնում, հետզհետե թուլանում էի՝ չնայած բոլոր դեղամիջոցներին:

Իրավաբանը գործում էր մեզ համար, նրան վճարելու մեծ գումարներ էր պետք: Ամուսինս օր ու գիշեր աշխատում էր՝ ֆինանսական կարիքները հոգալու համար: Ես այլևս անկարող էի աշխատելու:

Մեկ ամիս հիվանդանոցում մնալուց հետո գրանցվեց սակավարյունություն՝ անեմիա և դեպրեսիա: Դուրս գրվեցի:

Երեք օր տանն էի, բայց զգում էի, որ ինձ հետ լուրջ բան էր կատարվում: Հայելու մեջ նայելով՝ տեսնում էի, որ աչքերիս մեջ դեղնություն կա, մշտական հոգնածություն, թուլություն, ոչ մի բան չէի ուզում անել, տրամադրության անկում էր: Մի առավոտ էլ արթնացա և դեռ չէի հասցրել լոգարան գնալ, ուշաթափվեցի և կրկին՝ հիվանդանոց: Բժիշկները նշում էին, որ այս ամենը պայմանավորված է մեր կարգավիճակի հետ, որովհետև դեռ արտաքսման վտանգը կար, ես էլ՝ մտահոգության ու անորոշության մեջ էի: Բայց չէի հաշտվում ու պնդում էի, որ ինձ լուրջ ստուգումներ անեն: Այդպես էլ եղավ:

Արյան հետազոտման լաբորատոր պատասխանները ձեռքին՝ ինձ մոտ եկավ բժշկուհին և խնդրեց՝ առանձնանանք իր սենյակում: Եվրոպայում հիվանդն առաջինը ինքն է իմանում իր իսկ ախտորոշումը, որքան էլ այն ցանկալի չէ: Նրա դեմքից ես հասկացա, որ լավ բան չի հայտնելու: Երբ նա գերմաներենով ասաց, որ լաբորատորիայից եկած պատասխաններն ախտորոշում են «Leukämie», այդ պահին չհասկացա և հարցրի՝ «դա քաղցկեղն է», իսկ նա պատասխանեց՝ «այո՛, չարորակ», և ասաց, որ ինձ «անհրաժեշտ է ոսկրածուծի դոնոր»:

Այլևս շատ ջանքեր պետք չէ, որ նկարագրեմ այդ պահին իմ արձագանքը…Արագ կանչեցի ամուսնուս, նա տուն էր գնացել՝ ինձ անհրաժեշտ պարագաներ բերելու, և երբ ներս մտավ, ամեն բան հասկացավ: Որպես կին ես նրան հանձնարարականներ էի տալիս և ողբում էի: Միաժամանակ շատ վիրավորվածությունն ու ատելությունը, Հայաստանում եղած

անցուդարձն ստիպեցին ինձ՝ նրանից խնդրեմ, որ մեռնելուց հետո դիակս չտանի Հայաստան: Այդ պահին ամուսինս վատացավ, նրա երեսին գույն չկար. նա ինքն էլ տանջվում էր, որ կարող էր ամեն բան այլ լինել, որ այն մարդիկ, ովքեր չէին խնայում ու ցավեցնում էին, այս ամենի մեջ մեղքի բաժին ունեն: Նրա ատելությունն ու բարկությունը նրան հասցրել էին ամեն մեկից հաշվեհարդար տեսնելու ցանկության: Փա՛ռք Աստծուն, որ հետագայում սեր և ներում դրեց մեր սրտերում և հասկացանք, որ ատելությունն ու բարկությունը ամենից առաջ մեզ է վնասում և ոչ՝ ուրիշին, որ վրեժխնդրությունը Տիրոջն է (տե՛ս Եբր. 10.30):

Նույն օրը ամուսնուս զանգով հիվանդանոց այցելեց մի կին, ում մոտ աշխատել էի, և ով քաղցկեղի դեմ թերապիաներ էր ունեցել: Նա ինձ հանգստացնում էր, որ Ավստրիայում բժշկությունը շատ զարգացած էր, որ ամեն բան դեռ կորած չէ…, բայց ես ոչինչ չէի ուզում լսել…

Հաջորդ առավոտ ինձ տեղափոխեցին Լինց քաղաքի «Սուրբ Էլիզաբեթ» անունը կրող հիվանդանոց, որի օնկոլոգիայի բաժինը նոր էր բացվել՝ հագեցած բժշկական սարքավորումներով և լավագույն մասնագետներով: Ախտորոշումը հաստատվեց, և բժիշկներն անցան գործի, նշանակվեց քիմիաթերապիա: Ներսումս լացի ու ճիչի հետ մի քիչ հույս ծագեց: Հատկանշական է, որ հիվանդանոցի թե՛ միջանցքների, թե՛ սենյակների պատերին Քրիստոսի պատկերով խաչեր կային, և ես հակված էի, որ մահճակալս հենց այդ խաչերի մոտ լիներ, մեծ սպասելիքներ ունեի…

ՀԱՆԴԻՊՈՒՄ

Հույս էի փնտրում պատից կախված խաչերից, որակյալ բժիշկներից ու դեղամիջոցներից…

Առաջին իսկ քիմիաթերապիայի ժամանակ ճնշումս միանգամից բարձրացավ, շնչառությունս դժվարացավ ու հազիվ հասցրի հասկացնել, որ չեմ կարող շնչել: Արագ դադարեցրին քիմիայի երակային ներարկումը: Քիչ հետո, համապատասխան ստուգումներից բժիշկներն արձանագրեցին, որ երիկամներս դադարել են գործել: Նշանակվեց դիալեզ: Վերջին հույսերն էլ վերջնականապես մարեցին: Մտածում էի, որ Հայաստանում լինեի, կերազեի՝ տունը ծախենք, հասնեմ Եվրոպա և բուժվեմ: Բայց ես արդեն Եվրոպայի առաջադեմ երկրներից մեկի՝ Ավստրիայի առաջնակարգ հիվանդանոցներից մեկում եմ, որն աչքի է ընկնում գերժամանակակից միջոցներով և հմուտ մասնագետներով, բայց… վիճակս անհուսալի է, և շատ բացահայտ նկատում էի, թե ինչպես էին բժիշկներն իրենց հայացքներով խոսում այդ մասին: Ամուսնուս նույնիսկ զգուշացրել էին, որ առաջիկա օրերին ամենավատին սպասենք: Բժիշկները հորդորում էին նրան, որ երեխաներին բերի ինձ մոտ՝ հրաժեշտ տալու, որովհետև ամեն բան հաստատում էր, որ երկու շաբաթվա կյանք ունեմ: Դա այնքան իրական և անխուսափելի էր: Եվ քանի որ հիվանդանոցում հոգևորը կարևորվում էր, մի քույրիկ առաջարկեց աղոթել հոգուս փրկության համար, ես համաձայնեցի:

Չեմ կամենա, որ որևէ մեկը ապրի այս ամենը: Այդ պահին ես այնքան անզոր ու անօգնական էի: Չէի ուզում մեռնել, չէի հաշտվում այն մտքի հետ, որ սա պիտի ինձ հետ կատարվեր: Եվ երբ սկսեցի բարձրաձայն աղաղակել Աստծուն՝ ցույց տալով իմ անհամաձայնությունը պատահածի հետ. «Ինչո՞ւ ես, ես դեռ երիտասարդ եմ, տղաներս անչափահաս են…»: Չէի հասցրել այդ «դեռերը» թվարկել, երբ հստակ լսեցի՝ «Ո՞վ, եթե ոչ դու, ո՞ւմից ես լավը…»:

Գիտես, ուրիշ ժամանակ լիներ, կարող էի այնքան մարդկանց անուն թվարկել՝ ինչպես շատերն են այսօր անում, համեմատվելով նրանց հետ, բաղդատելով իմ արժեքները… **Բայց երբ քեզ հետ խոսում է ամեն բանի Տերը՝ Ամենակալը, քո Արարիչը, դու ասելու ոչինչ չես ունենում, ուղղակի լսում ես:**

Գիտես, այդ պահին այլևս չես փորձում արդարանալ, սրանրա սխալների մասին խոսել…

Վայրկյանների ընթացքում Աստված մի տեսաժապավենով ցույց տվեց իմ ապրած տարիները, որն այնքան զզվելի թվաց: Ես տեսա իմ մեղավոր բնությունը, ինչպես խոսքն էլ ասում է. «Արդար չկա, մեկն էլ չկա…» (Հռոմ. 3.10-12):

Լինելով Քրիստոսի եկեղեցին հալածողներից մեկը (շատ եմ հալածել հավատացյալներին) և կուրծք ծեծելով որպես «առաջին» քրիստոնյա՝ իրականում ես ապրել եմ առանց Քրիստոսի:

Անկողնում տեղս չէի գտնում. անհուսությունը, անհամաձայնությունը, լացը միախառնվել էին: Ոչ մեկին չէի ուզում սենյակում տեսնել: Ամեն բան գագաթնակետին հասավ, երբ ես զգացի, որ դժողքում եմ: Մի վանդակում փակված՝ կրակների մեջ, փորձում էի իմ ուժերով վանդակի ճաղերը մեծացնել, որ դուրս գամ, բայց անհնար էր: Ես մեռնում էի, դա ակնհայտ էր, և հետն էլ դժոխք էի գնում, սկսեցի ուղղակի ճչալ. «Հիսուս, Հիսուս…»: Այս անգամ Նրա անունը կանչելով՝ երեք օր ժամանակ խնդրեցի ՝ մեղքերս խոստովանելու համար…

ԱՊԱՇԽԱՐՈՒԹՅՈՒՆ

Չգիտեմ, թե որտեղից ծնվեց այդ երեք օրվա մեղքի խոստովանության միտքը, բայց հետո հասկացա, որ դա նվեր էր Երկնքից՝ սիրող Հորից: Նվեր՝ հիվանդասենյակում, կյանքի վերջին րոպեներն ապրողիս՝ հեռու հարազատներից, բարեկամներից, մտերիմ ընկերներից, սիրելի մարդկանցից և նույնիսկ՝ ընտանիքից…

Երեք օր շարունակ, Աստծո սիրով ու ողորմությունով, դառը զղջումով ես հիշում էի անցյալի դառնությունները, չար ու վատ մտքերը, դրվագները, խռովությունները և անկեղծ պատմում էի Հիսուսին ու ամեն օր շոշափում էի ինքս ինձ, համոզվում, որ դեռ ողջ եմ:

Հավատա՛, սիրելի՛ ընթերցող, անկողնում պառկած ես այլ բան չէի կարող անել, բացի նրանից, որ այդպես կեղտոտ, մեղքերով լեցուն, հոգնած, վիրավորված, մոլորված ընկա Բարձրյալի ոտքերի առջև՝ Նրանից ներում խնդրելով, որ տարիներ շարունակ ինքս էի փորձել իմ կյանքը տնօրինել:

Հենց այդ պահին, երբ կյանքս լիովին հանձնեցի Հիսուսին, ես վերապրեցի մեր Տիրոջ մեծ սերը, զգացի, թե ինչպիսի ջերմությամբ Նա գրկեց ինձ, ընդունեց, առանց ոչինչ հարցնելու ուղղակի խաղաղեցրեց… Այդ երանելի պահին Աստված պայմաններ ու «պիտիներ» չդրեց, սիրեց հավիտենական սիրով… Աչքերիցս արցունքներն առատ հոսում էին, բերանիցս կարծես խճաքարեր էին թափվում, որն ամուսնուս բնորոշմամբ՝ ներսի դառնություններից ազատվելու նշան էր: **Աստծո քաղցրությունն ինձ ապաշխարության մղեց (Հռոմ. 2.4):**

ՆՎԵՐ ԵՐԿՆՔԻՑ՝ ՀԱՎԱՏՔ ԴԵՊԻ ՄԵՌԵԼՆԵՐԻՑ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԱՌԱԾ ԱՍՏՎԱԾ

Զարմանալի է, մինչև այդ մահացու ախտորոշումը, ես ավելի շատ վախ ու տագնապ ունեի, բայց Հայր Աստծո հետ Իր Որդու՝ Հիսուսի միջոցով հաշտվելուց հետո (տես Հռոմ. 5.1) շատ ավելի խաղաղ ու հանգիստ էի: Չնայած որ բժիշկները, երիկամներիս հետ կապված, տեղեկացրին, որ նոր երիկամներ պատվաստելու մասին խոսք լինել չի կարող, անիմաստ է, քիմիան դադարեցված էր, իսկ արյան մեջ չարորակ բջիջներն ագրեսիվորեն շատանում էին, այնուամենայնիվ, իմ հոգում հանգստություն կար: Ճիշտ է ֆիզիկապես շատ տկար էի, մարդկային կերպարանքից ընկած, բայց զգում էի, որ ներսումս մի բան փոխվել էր: Հենց այդ ժամանակ էլ ես ինքս արձանագրեցի իմ հոգու բժշկության սկիզբը:

Ինքը՝ հոգիների Տերն ու Փրկիչն սկսեց այդ գործընթացը: Ես հանձնվել էի Նրան՝ Ամենակալին, Ում համար անկարելի և դժվար բան չկա (Ծննդոց 18.14):

Խնդրել էի, որ Հայաստանից «Աստվածաշունչ» ուղարկեն, ձեռքս ընկնելուն պես, սկսեցի ոգևորված կարդալ: Շատ բան հասկանում էի, շատ բան էլ՝ ոչ, բայց կարևոր չէր, մանկան պես հավատում էի, որ «Աստվածաշունչը» այն կարևոր դեղամիջոցներից է, որ օրվա մեջ ընդունելը ոչ միայն ցանկալի է, այլև՝ պարտադիր: Հիվանդասենյակում կար հնարավորություն դիտելու «Bible TV» հեռուստաալիքը՝ գերմաներենով: Հատկապես «Երգի՛ր ինձ հետ» հաղորդումն ինձ շատ էր դուր

գալիս: Գոհության, փառաբանության երգերի բառերն էկրանին էին, ես էլ երգում էի՝ երկրպագում ու շնորհակալություն հայտնում Աստծուն: Դիտում էի բժշկությունների վերաբերյալ տարբեր վկայություններ: Պարզ հիշում եմ մի նախկին մուսուլմանի վկայություն, որի կինը քաղցկեղով հիվանդացել էր: Նրանք աղոթել էին «իրենց Աստծուն», բայց Հիսուսն էր հայտնվել Իր իսկ վերքերով և հայտնել Իր աստվածությունն ու փառքը:

Նրանք ընդունել էին Հիսուսին, մերժվել էին բոլոր ազգականներից, ծնողներից ու նրանց ֆինանսական աջակցությունից: Բայց Տերը հավատարիմ է. կինը բժշկվել էր, ընտանիքն ապրում էր Հիսուսին պաշտելով ու վկայելով: Այսպիսի շատ այլ վկայություններ, քարոզներ, աստվածաշնչյան խոսքի մեկնություններ լցնում էին մեծ հավատքով, որովհետև «Հավատքը լսելուց է, լսելը՝ Աստծո Խոսքից» (Հռոմ. 10.17):

Այդ օրերին ես նման էի այն փոքրիկ երեխային, որ երկար ժամանակ երազում է մի բան և հանկարծ նվերի տեսքով ստանում է այդ երանելի սպասվածը:

Համոզված եմ, սիրելի՛ ընթերցող, որ դո՛ւ էլ սրտի թրթիռով, հոգածությամբ և մեծ զգուշությամբ կվարվես այն թանկարժեք նվերի հետ, որ չես վաստակել, բայց ստացել ես:

Սա հավատքով ստացած այն փաթեթն է, Աստծո շնորհքով տրված այն խոստմունքը, որն է՝ փրկության ժառանգությունը (տե՛ս Եփես. 2.8,9):

ԱՍՏՎԱԾԱՇՆՉԻ ԽՈՍՔԸ ԿԵՆԴԱՆԱՑՆՈՒՄ Է

Անկողնում գամված՝ տանում էին դիալեզի, բերում: Շատերն էին կողքիս մահանում, բայց ես չէի հուսահատվում ու ինքս ինձ հանգստացնում էի. «Ես Հիսուս ունեմ»: Ինձ ավելի շատ անհանգստացնում էր հետևյալ միտքը՝ այդ մեռնող հիվանդները Հիսուսին գիտե՞ն, ընդունե՞լ են որպես անձնական Տեր ու Փրկիչ:

Այդ մեծ վստահությունն ու համարձակությունն առ Աստված նույնպես Տիրոջից էր, Լույսի Հորից, այն նվեր փաթեթի մեջ, որտեղ կա խոստմունք՝ Տիրոջն ապավինողները ամոթով չեն մնա (տե՛ս Ա Պետր. 2.6):

Օրեցօր վիճակս վատանում էր, ֆիզիկապես հյուծվում էի, ոչինչ չէի կարողանում ուտել, անընդմեջ սրտխառնոցներ: Քառասուն օր շարունակ արհեստական միջոցներով եմ սնունդ ստացել: Անքնությունից տառապում էի, բայց միևնույն ժամանակ կար մեծ ցանկություն՝ Հիսուսի հետ շարունակ խոսելու, մտերմանալու:

Մի երեկո էլ, ճնշող ցավերի մեջ փորձեցի բացել Աստվածաշունչը և կրկին կարդալ: Դժվարանում էի, դեղերից աչքերս չորանում էին: Աչքի կաթիլներն ստանալուց հետո բուժքույրը հորդորեց՝ երեկոյան թույլ լուսավորության մեջ չկարդալ՝ տեսողությունս չվնասելու համար: Բայց լիովին հուսացած էի Աստծուն, և այդ պահին ինձ իմ Տիրոջ հետ կապող միջոցը «Աստվածաշունչն» էր՝ կենդանի խոսքը (տե՛ս Առակ. 30.5):

Այդ օրերին իմ կողքին չկային հավատացյալներ, հովիվներ, Աստծո մարդիկ, Սուրբ Հոգով լցված ծառայողներ, որոնց ներկայությունը շատ էր կարևորվում, բայց ինչպես վերը նշեցի, «Bible TV»-ն ինձ օգնում էր աղոթել, վստահել, խոսքն ընդունել:

Փա՛ռք այն եռամեկ Աստծուն՝ Հորը, Որդուն և Սուրբ Հոգուն, Ով նեղության մեջ ինձ մենակ չթողեց և Իր ներկայությամբ լցնում ու մխիթարում էր: Այո՛, Տերն իմ լացի ձայնը լսել է... (տե՛ս Սաղմ. 6.8):

Հովհաննեսի Ավետարանի 11-րդ գլխի մեռած Ղազարոսի պատմությունն ինձ շատ ոգևորեց, իսկ 4-րդ նախադասությունն ընդունեցի՝ Աստծուց խոսք հենց ինձ համար, իմ իսկ վիճակին բնորոշ:

Հովհաննես 11.4. «Այն հիվանդությունը մեռնելու համար չէ, այլ՝ Աստծո փառքի համար, որ Աստծո Որդին նրանով փառավորվի»: Այո՛, «ALL» կոչվող այդ հիվանդությունը՝ սուր լեյկոզը, արյան քաղցկեղը մեռնելու համար չէ, Աստված կբժշկի ինձ, և բոլորը Աստծուն փա՛ռք կտան իմ բժշկության համար, և ես կվկայեմ, որ Նրա Որդու՝ Հիսուս Քրիստոսի վերքերով ես բժշկվեցի (տե՛ս Ա Պետր. 2.24, Եսայի 53.5), և Աստծո Որդին էլ կփառավորվի: Այս խոսքը սերմվեց իմ ներսում, և սկսեցի հավատալ, փայփայել, նույնիսկ առողջ վիճակի պատկերներ տեսնել: Շատերն այդ ժամանակ մտածում էին, որ ես հոգեպես խանգարվել եմ: Իրականությունը շատ ռեալ էր, իսկ ես խոսում էի ինչ-որ երազանքների, աներևույթ բաների մասին: Հավատքն էլ հուսացած բաների հաստատությունն է և չեր-

ևացող բաների ապացույցը (տես Եբր. 11.1): Լսում էի խղճահարության խոսքեր. «Գոհարն ինչ մեղք է, քաղցկեղից բացի, լիովին խանգարվել է...»: Նույնիսկ երբ ամուսնուս հետ խոսում էի առողջանալուս մասին, շատ հուսահատ դեմքով նայում էր, և որպեսզի լավատեսությունս չկոտրեր, համաձայնում էր՝ ներսում երկմտելով, որն այնքան նկատելի էր...

Սա նման է այն իրավիճակին, երբ հեռախոսով հաղորդագրություն ես ստանում, ու դրա մասին գիտեն ուղարկողն ու ստացողը:

Սիրելի՛ ընթերցող, սա լոկ լավատեսություն չէր: Սա ուղերձ էր Երկնքից՝ սիրող Հորից, խոսք՝ Աստվածաշնչից: Ինչպե՞ս կարող է մեռնող հիվանդը, ով իրականում ռեալիստ է եղել, ուղղակի դրական մտածեր, առանց որևէ հիմքի, դա ինքնախաբեություն է: Հատկապես, որ իմ կյանքում շատ էի համոզվել, որ դատարկ լավատեսությունը բերում է հիասթափության: Ու քանի որ Աստծո Խոսքը պարապ ետ չի դառնում (տես Եսայի 55.11), այն հոժարությամբ ու սիրով ընդունելուց հետո պետք է խնամքով մշակել, որ արմատ գցի, և Տերը կաճեցնի (տես Ա Կորնթ. 3.7), ծիլ կտա, հասկ կդառնա և պտուղներ կբերի (տես Ղուկ. 8.11-15):

«ՎԵՐ ԿԱՑ». ԱՅՆ ԱՅՍՕՐ ԷԼ ԱՐԴԻԱԿԱՆ Է

Դիալեզը շարունակվում էր, բժիշկներն իրենց գործն էին անում, գնահատում էին Աստծո նկատմամբ այն մեծ հավատքը, որ երկնային Հայրը նվիրել էր ինձ: Հաստատում էին, որ առանց դրա՝ լավագույն թերապիան էլ օգուտ չի տա: Նրանք քաջալերում էին ինձ՝ ասելով. «Մենք աստվածներ չենք, մենք մեր գործն ենք անում, իսկ մնացածը,- վերև նայելով շարունակում էին,- Աստծո գործն է»: Դա էլ էր ինձ ոգևորում: Ինձ հուսադրում էր, որ բժշկությունն էլ՝ Աստծուց պարգև է (տես Ա Կորնթ. 12.9):

Տիրոջ ձեռքը չի կարճացել, Նրա ձեռքը մեկնած է (տես Եսայի 14.27): 5-րդ դիալեզից հետո, երբ հերթական անգամ երիկամների ստուգում էին անում, բժշկի դեմքի արտահայտությունը միանգամից փոխվեց, մեծ զարմանք կար: Կանչեց 2-րդ բժշկին, ապշած էկրանին հետևելով՝ շարունակում էին ուշադիր զննել: Ես անհանգստացած հարցրի՝ բժի՛շկ, ամեն ինչ շա՞տ վատ է...

Նրանք ցնցված էին, բժշկի ձեռքից ուլտրալարի ապարատն ընկավ և անսպասելի ուրախությունով պատասխանեց. «Փա՞ռք Աստծո, տիկին Մուրադյան, քո երիկամները կարծես նորածին մանկան երիկամներ լինեն, նույնիսկ փոշի չկա...»:

Փա՞ռք Հիսուսին, ես ուրախությունից ու ցնծությունից ողբում էի, անդադար գոհանում, որ Տերը լսեց իմ աղաղակը, և Տերն ընդունում է իմ աղոթքը (տես Սաղմ. 6.8):

Բացահայտ տեսնելով Աստծո մեծ հրաշքը՝ ես հասկացա «Աստվածաշնչի» ամեն խոսքի ճշմարտությունն ու հավատքով ընդունելու կարևորությունը, նույնիսկ եթե մասամբ հաճե-

լի չէ և հանդիմանում է ինձ: Աստծո Խոսքը կենդանի է և զորավոր... (տե՛ս Եբր. 4.12):

Տեսնելով, որ երիկամների հետ այլևս խնդիրներ չկան, բժշկական անձնակազմն անցավ ակտիվ գործողություններին: Կրկին սկսվեց քիմիաթերապիա նաև՝ ճառագայթ: Այս անգամ արդեն ավելի էի համոզված այն խոսքի մեջ, որն ընդունել էի: Ավելի ու ավելի վստահեցի այն միակ ճշմարիտ Աստծուն, Ով Իր Որդուն էլ չխնայեց, այլ մեզ համար մատնեց Նրան, էլ ինչպե՞ս ամեն բան չի շնորհի մեզ (տե՛ս Հռոմ. 8.32):

Քիմիա-ճառագայթ թերապիաների ժամանակ մարմինս ֆիզիկապես թուլացած ու հյուծված էր: Մի օր, երբ հերթական անգամ բուժքույրն ավարտեց անկողնուս հարդարանքը, ես փորձեցի աթոռից ինքնուրույն ոտքի կանգնել և մոտենալ մահճակալին: Կանգնելուց հետո, դեռ չէի հասցրել մի քայլ անել, ուշաթափվեցի: Բուժքույրը հասցրել է բռնել ինձ և միացնել տագնապազդանշանը: Բժիշկներն արագ արձագանքում են՝ փորձելով արագ կարգավորել սրտիս աշխատանքը և թթվածին տալ: Դա թթվածնային քաղց էր, գիտակցության կորուստ, որից շատ հիվանդներ նույնիսկ դուրս չեն գալիս: Այս ամենն ինձ հետո են պատմել: Այդ ընթացքում, մինչ բժիշկները փորձում են ինձ կենդանացնել, ես տեսիլք եմ տեսնում. պառկած եմ և դեմ-դիմաց՝ ոտքից գլուխ սպիտակ հանդերձով մեկը կանգնած էր, փորձում էի պառկած տեղից գլուխս բարձրացնել՝ տեսնելու, թե ով է... Հիսուսն էր, դեմքը չերևաց, ճառագվող լույս էր, բայց ձայնը հստակ ու մեղմ էր, և հայերենով լսեցի. «Վե՛ր կաց»: Խոսքի հետ միաժամանակ անմիջապես նստեցի անկողնուս մեջ: Ներսից մի ձայն ինձ

հուշում էր, որ տեսիլքի մասին ասեմ, մյուսը հակառակվում էր՝ կմտածեն, որ իսկապես խանգարվել եմ...

Կտրուկ նստելուց, փսխելուց հետո ուժերս հավաքեցի ու ներկաներին ասացի, թե ինչ ասաց Հիսուսն ինձ. «Վե՛ր կաց», միաժամանակ պնդում էի, որ ոչ թե գերմաներենով, որ չմտածեն, թե իրենց ձայներն եմ լսել, այլ՝ մաքուր հայերենով, իմ մայրենի լեզվով: Նրանք էլ փառք տալով Աստծուն՝ շարունակեցին ձեռնարկել բժշկական բոլոր միջոցները ՝ վիճակս կայունացնելու համար:

Սիրելինե՛ր, սա եղավ իսկապես «վե՛ր կաց» իմ կյանքի բոլոր բնագավառներում:

«Վե՛ր կաց» գաղջ մտքերից, «վե՛ր կաց» այն մութ խավարից, ցեխից, տիղմից, որտեղ սատանան իմ իսկ թույլտվությամբ ամուր շղթայել էր ինձ:

Սա եղավ «վե՛ր կաց» բոլոր տեսակի մարդկային «վարդապետություններից» ու «պիտիներից»: «Վե՛ր կաց» ստի, կեղծիքի, ինքնախաբեության ու դիմակավորված թագավորությունից: Եվ, ի վերջո, սա եղավ «վե՛ր կաց» մեղքի ծառայությունից ու գերությունից:

Սիրելի՛ ընթերցող, ինձ համար երկու դուռ կար և ընտրության հնարավորություն: Կյանքը և մահը հանդիպեցին ու բախվեցին, և կյանքն իհարկե հաղթեց: Հիսուսն Ինքն ասաց. «Ես եմ ճանապարհը և ճշմարտությունը և կյանքը...» (Հովհ. 14.6):

Սուրբ Հոգու մղումով առաջացած ապաշխարությունը մտքի փոփոխությունն է, որն ուղղվում է դեպի Աստված: Մտքի փոփոխությանը հասնելու համար զգացմունքներին ճիշտ ուղղություն տալն ու կամքը գործի դնելն է:

ԿԱՆՉԻՐ ՆՐԱՆ

Այսօր Աստված յուրաքանչյուրիս տվել է հնարավորություն և ազատ կամք: «Ահա Ես դռան առջև կանգնած եմ և թակում եմ. եթե մեկը լսի Իմ ձայնը և դուռը բացի, կմտնեմ նրա մոտ և ընթրիք կանեմ նրա հետ, և նա՝ Ինձ հետ» (Հայտն. 3.20):

Բա՛ց արա այդ դուռը, բա՛ց արա տարիներ շարունակ կողպված քո սիրտը և հանձնի՛ր Հիսուսին, թող Նա մտնի և առաջնորդի քո ճանապարհները: Վստահի՛ր Նրան քո կյանքը, որն իրականում նվեր է երկնային Հորից (տե՛ս Երեմիա 1.5):

Կանչի՛ր Նրան, և Նա կպատասխանի և քեզ մեծամեծ ու անհասանելի բաներ կիմացնի, որ դու չգիտես (տե՛ս Երեմիա 33.3):

«Դու չգիտես...». ես հասկացա ու համոզվեցի, որ իսկապես շատ բան չգիտեի ու հիմա էլ չգիտեմ... Իսկ այն ամենը, ինչ գիտեի, դատարկ ու փուչ էին...

Հպարտություն կոչվածը, որ շատ ժամանակ մեզ համոզում է, որ մենք գիտենք, մենք հավատում ենք, հեռացնում է այն իրական ու միակ Աստծուց, Ով Ինքն Իրեն հայտնում է Աստվածաշնչում:

Սուրբ գիրքն էլ ամբողջությամբ գիտենալ՝ դեռ չի նշանակում հավատալ: Թեոլոգիան անկարող է փրկել մեզ, եթե Սուրբ Հոգին չօգնի հասկանալու, բացահայտելու Խոսքը, և եթե այն չկիրառվի գործնականում, խաբկանք է: Գիրն սպանում է, Հոգին՝ կենդանացնում (տե՛ս Կորնթ. 3.6):

Սիրելինե՛ր, չգիտեմ այս պահին ձեր վերաբերմունքը, դա իրականում ձեր կամքն ու որոշումն է, բայց լինելով ձեզնից մեկը, խոսում եմ իմ սխալ պատկերացումների մասին: Իմ իսկ կերտած Աստվածը միայն ձեռակերտ տաճարներում էր, նկարներում, ծիսակատարություններում ու այնքան վերացական: Բայց «Այն Աստվածը, որ այս աշխարհը և ամեն բան, որ նրանում կա, արեց, Նա երկնքի և երկրի Տերը լինելով՝ ձեռագործ տաճարներում չի բնակվում...» (Գործք 17.24): «Չգիտե՞ք, որ դուք Աստծո տաճար եք, և Աստծո Հոգին բնակված է ձեզանում» (Ա Կորնթ. 3.16):

Իմ իսկ կերտած ու պատկերացրած Աստվածը միայն զատկական տոներում էր: Սուրբ Ծնունդն ինձ համար տոնական շքեղություն ու նվերներ էին, իսկ Հարության տոնը՝ ուղղակի ձու ներկելու արարողություն և զատկական կերակուր: Ես չեմ ամաչում այս ամենը խոստովանելուց ու համոզված եմ, որ շատերդ ինձ պես Հիսուսի կարիքն ունեք, ոչ թե զուտ եկեղեցու, ավանդության, կրոնի, այլ՝ այդ ամենը համակարգողի՝ իրական և կենդանի Աստծո, և ինչպես խոսքն էլ ասում է. «Որ Քրիստոսը բնակվի ձեր սրտերում, և դուք սիրով արմատ գցած և հաստատված լինեք... Որ ճանաչեք Քրիստոսի սերը, որ ամեն գիտությունից գերազանց է, որ Աստծո ամեն լիությունով լցվեք» (Եփես. 3.17-20):

Աստվածաշնչյան խոսքն ասում է. «Իմ ժողովուրդը գիտություն չունենալու պատճառով բնաջինջ եղավ» (Ովսե 4.6): Սա հղում է՝ երկինքն ու երկիրն արարող Աստծուց մեզ՝ բոլորիս, որ ճիշտ գիտությունն ունենանք և չմոլորվենք ու չկոր-

չենք մարդկային հնարքների մեջ: Այն գիտությունը, որ չենք ստանա այլ աղբյուրներից, բացի իրական, կենդանի և ճշմարիտ աղբյուրից՝ Աստծո Խոսքից, այն կլինի անաղարտ, զուլալ և անբիծ կերակուր հավատքի մեջ աճելու, հասակ առնելու, Տիրոջ հետ մեր հարաբերությունները շտկելու և քրիստոնեական արժեքները գնահատելու համար:

Եվ ուրեմն, սիրելիներ, «մտի՛կ տանք հավատքի Ձորագլխին և Կատարողին՝ Հիսուսին...» (Եբր. 12.2), «որովհետև ամենս Քրիստոսի ատյանի առջև պիտի կանգնենք» (Հռոմ. 14.10-15): «Ուրեմն, մեզնից ամեն մեկն իր անձի համար պիտի հաշիվ տա Աստծուն»: Սա է ասում Տերը, «Ով կամենում է, որ ամեն մարդ փրկվի և ճշմարտության գիտությանը գա» (Ա Տիմոթ. 2.4):

ԱՂՈԹՔԻ ԶՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Դժվարությունների և մասնավորապես կյանքի ու մահվան պայքարի մեջ վերապրած ամեն բան ընդունեցի որպես Տիրոջից խրատ ու չվիատվեցի: Ընդունելով ամեն հանդիմանություն՝ ես սովորեցի համբերել ու հաստատվել Աստծո Խոսքի վրա՝ շարունակ աղոթելով...

«Տերը Իրեն սիրողին խրատում է», և եթե չանարգենք և խրատին համբերենք, Աստված մեզ հետ՝ ինչպես որդիների հետ կվարվի (տե՛ս Եբր. 12.5-10): Ինձ էլ համարելով որպես Աստծո որդի՝ խոստմունք տվեցի, որ կյանքիս մնացած տարիները պիտի ապրեմ Հոր կամքի մեջ՝ հնազանդվելով Նրա խոսքին, իսկ Հոր կամքը բարին է, հաճելին և կատարյալը (տե՛ս Հռոմ. 12.2): Այդ ժամանակ ինձ տանջում էր այլ միտք՝ ինչպե՞ս կարող եմ Աստծո կամքի մեջ կենալ, Հիսուսի անունը վկայել, հավատացյալ անունը կրել, եթե իմ ամուսինը չապաշխարի ու չընդունի Տիրոջը: Ի դեպ՝ պատահածի առաջին իսկ օրվանից ես տեսա ամուսնուս առանձնահատուկ վերաբերմունքն ու ուշադրությունը: Այնքան հոգատար էր, որ ամբողջ բժշկական անձնակազմը, նաև մեզ շրջապատող մարդիկ ապշած էին: Իրականում, նա դեմ չէր Աստծո հրաշքներին և, մասնավորապես, իմ բժշկությանը, բայց նրան ճանաչելով՝ համոզված էի, որ ոտքի կանգնելուց հետո ինձ համար հեշտ չէր լինելու վկայել Հիսուսի մասին, ավետարանել, դառնալ Հիսուս Քրիստոսի մարմնի՝ եկեղեցու իրական անդամ, շարժվել՝ ինչպես եկեղեցու գլուխը՝ Հիսուսը, մի խոսքով՝ առաջ-

նորդվել և շփվել հավատացյալների հետ: Շատերի պես նա էլ կասի՝ ես էլ եմ հավատում, բայց գուցե արգելի՝ հավատքի կյանքով ապրել: Այս մտորումների մեջ սկսեցի Հիսուսին խնդրել, որ ամուսնուս փոխի, որ ձգի նրան ու ողորմի (տես Հռոմ. 9.15,16), որ տարիներ շարունակ ունեցած մեռած հավատքից, եկեղեցու շինությունների պատերը համբուրելուց և նրա շուրջը յոթ անգամ պտտվելուց, նաև մոմավառությունից ու եկեղեցական ծիսակատարություններից բացի, վերադառնա կենդանի հավատքին՝ փրկության Ավետարանին, ու հավատա, որ Հիսուսն Ինքը Խոսքն է, և Խոսքը մարմին դարձավ (տես Հովհ. 1.1,14): Այսպես ասած՝ ես սկսեցի աղոթել սովորել և հավատալ, որ աղոթքը Երկինքն է բացում (տես Հովհ. 16.23,24), և հավատքով սպասել...

Սիրելի՛ ընթերցող, ես չեմ մերժում վերը նշվածները, բայց ուզում եմ հստակ հավատա՛ս, որ այդ ամենը դատարկ ու սին են, և քո կյանքում ոչինչ չի փոխվի՝ առանց կենդանի խոսքի, առանց այդ խոսքին հավատալու ու առանց դավանելու: Եկեղեցու շենքը, կնունքի արարողության ամենագեղեցիկ տարոսիկներն ու դեկորացիաները, ճոխ և առատ սեղանները, թանկարժեք նվերները, քավորի ու նրա ընտանիքի շատ կիրթ լինելը չեն կարող մեզ փրկություն տալ. մեզ փրկություն կարող է տալ միայն այն խոսքը, որը մատուցվում է քահանայի, հովվի, Աստծո ծառայի բերանից՝ ըստ Աստվածաշնչի: Այն խոսքը, որը սովորեցնում է հստակ գիտենալ, որ ոչ թե ապականացու արծաթով ու ոսկով փրկվեցինք մեր հայրենավանդ ունայն վարմունքից, այլ Քրիստոսի պատ-

վական արյունով՝ ինչպես մի անբիծ և անարատ գառան (տես Ա Պետր. 1.18-20):

Շարունակելով փոքր կյանքի մեծ պատմությունը՝ նշեմ, որ Աստծո Խոսքի արթնություններին զուգահեռ, այնուամենայնիվ, երկրից արտաքսման վտանգը դեռ կար: Չնայած մեր իրավաբանի փաստարկներին և բժշկական համապատասխան թղթերին՝ երկրի իշխանություններից անընդհատ բացասական պատասխան էինք ստանում:

Նույնիսկ առաջին ատյանում մեր գործերով զբաղվողը նշել էր, որ ես հիվանդ չեմ, այլ՝ քիմիան ստանում եմ, որ չհիվանդանամ: Ծիծաղելի էր, բայց...

Սա շատ էր անհանգստացնում ամուսնուս, այնքան ժամանակ, մինչև որ նրան էլ ամեն փնտրտուք, այս աշխարհի ամեն անարդարություն և անվստահություն բերեց ապաշխարության: Դրանից հետո մենք փնտրում էինք ոչ թե այն արդարությունը, որ օրենքից է, այլ այն արդարությունը, որ հավատքից է (տես Փիլիպ. 3.9):

Փա՜ռք Աստծուն, ճակատագրական այդ օրերին մենք մենակ չէինք: Շատերն էին կանգնած մեր կողքին՝ թե՛ տեղացիներ, թե՛ հայեր: Առաջին իսկ օրվանից աննկատ ձևով օգնում էին տարբեր հարցերով՝ ֆինանսական, հոգեբանական, իրավաբանական, կենցաղային: Նրանց միջոցով տեսնում էի իրական քրիստոնյայի լույսը (տես Մատթ. 5.16):

Վերադառնալով առողջական վիճակիս՝ նշեմ, որ երկու տարի քիմիաթերապիան շարունակվեց, ընթացքում ունենում էի լուրջ խնդիրներ, իմունային համակարգի վատթարացման

պատճառով հիվանդացա խոզագրիպով: Նույնիսկ Ավստրիայում արձանագրվեցին մահվան դեպքեր, բայց Տիրոջից խոսք ունեի. «Չեմ թողնի քեզ և երեսից չեմ գցի» (Եբր. 13.5), հավատում էի, որ կրակների միջով էլ անցնեմ, ջրերի միջով էլ անցնեմ, Տերն ինձ հետ է (Եսայի 43.1-3):

Մի օր էլ, երբ հերթական թերապիայի էի գնում, ինձ տեղափոխող տաքսի- ծառայության մեքենան վթարի ենթարկվեց: Մեքենան այնպես վնասվեց, որ էլ նպատակահարմար չգտան վերանորոգելու, բայց ինձ և վարորդին ոչինչ չպատահեց: Մեկը մյուսի ետևից իմ կյանքում հրաշքներ էին արձանագրվում, բայց ոչ թե այն պատճառով, որ ես «այնքա՛ն լավն էի», «այնքա՛ն արդար» կամ էլ սիրտս «այնքա՛ն մաքուր» էր, որ արժանի էի դրան: Ո՛չ, միանշանակ՝ ո՛չ: Այլ այն պատճառով, որ ես ընդունեցի, որ մեղավոր մարդ եմ և որոշեցի որ օծյալ փրկչի՝ Հիսուսի կարիքն ունեմ այս երկրային կյանքում: Դարձա Նոր ուխտի մարդկանցից մեկը: Հավատացի ու շարունակում եմ հավատալ, որ ես չեմ կարող ինքս իմ մեղքերը մաքրել՝ որքան էլ ցանկանամ, գուցե ծածկե՛լ, բայց Հիսուսի արյունը զորություն ունի մաքրելու, լվանալու յուրաքանչյուրիս մեղքը: Նա չեկավ արդարների համար, այլ՝ մեղավորներին ապաշխարության կանչելու (տե՛ս Ղուկ. 5.32): Նա չեկավ առողջների, այլ՝ հիվանդների համար: Հիվանդ՝ ոչ միայն ֆիզիկապես, այլ՝ մտքով ու հոգով:

Սիրելինե՛ր, Աստված չի նայում մեր արժանիքներին, որով գնահատում ենք մեկս մյուսին, այլ՝ նայում է Իրեն փափագող և հավատքով լցված սրտերին: Նա է մեր սրտերը և երիկա-

մունքները քննողը: Եվ ինչպես բազմիցս Ավետարաններում ենք տեսնում՝ կույրին, կաղին, բորոտին և ամեն հիվանդություն ունեցողին բժշկելիս Հիսուսն ասում էր՝ քո հավա́տքը քեզ ապրեցրեց, բժշկեց... (տե՛ս Ղուկ. 18.42,43),

նաև՝ «Եթե հավատաս, Աստծո փառքը կտեսնես» (Հովհ. 11.40):

Այնպես որ, ես ոչ մի արժանի գործ չէի գործել, որ Աստծո զորավոր բազուկը տեսնում էի մեր ընտանիքում, կյանքի գրեթե բոլոր բնագավառներում: Սա այն հավատքն է, որը բերում է ապաշխարություն, որից հետո միայն գալիս է հավատքը՝ գործերով (տե՛ս Հակոբ. 2.20):

ՀԱՎԱՏՔԸ՝ ՈՐՈՇՈՒՄ ԵՎ ԱՊՐԵԼԱԿԵՐՊ

Երկու տարի շարունակ, քիմիաթերապիաներին զուգահեռ, ապրում էի հավատքի կաթնակերության կյանքը: Որպես նորահավատներ՝ թե՛ ես, թե՛ ամուսինս փնտրում էինք հավատացյալների, ովքեր համառ աղոթքներով, քաջալերանքով հորդորում էին կանգ չառնել և հավատքով լցվել: Եթե մի ժամանակ անշնորհք արտահայտություններով ու անլրջությամբ էի վերաբերվում հավատացյալներին և հավատացյալ բառին, առհասարակ, ապա այդ օրերին և հիմա էլ, այլևս երանություն է այդ անունը կրելը: «Տերը պահում է հավատացյալներին... Քաջացեք, և ձեր սրտերը թող ուրախանան, դուք՝ ամենքդ, որ Տիրոջն եք հուսացած...» (Սաղմ. 31.23,24): Հիսուսն Ինքը Թովմասին՝ Իր աշակերտին ասաց. «Մի՛ եղիր անհավատ, այլ՝ հավատացյալ» (Հովհ. 20.27):

Չէի պատկերացնում, որ իմ կյանքում սկսվելու է մի նոր էտապ՝ հալածանք՝ Հիսուսի անունը կրելու համար: Սկզբնական շրջանում, քանի դեռ լիովին վերականգնված չէի, շատերը խնայում էին, բայց երբ եկավ պահը, որ Տիրոջից ստացած խոստմունքը ամուր բռնած շարժվում էինք՝ ապաշխարության գործեր գործելով, տեղատարափ անձրևի պես սկսվեց հարձակում:

Հետաքրքիր է չէ՞, քանի դու վազում ես այս աշխարհի մոլեռանդ ցանկությունների ետևից, չարախոսում ու դժգոհում ես, ըմբոստանում ես ամեն բանի դեմ, կյանքդ էլ վերածվում է կռապաշտության, դա ավելի նորմալ ու բնական է շրջապատի համար:

Բայց երբ տեսնում ես մեղավոր էությունդ և ամեն բան վստահում ես Հիսուսին՝ Նրանից ներում խնդրելով, շատերին տարօրինակ, նույնիսկ՝ ծիծաղելի է թվում: Տարիներ առաջ իմ և, առհասարակ, մարդկանց կյանքերի բնութագրումը հորոսկոպն էր, ինչպես որ այսօր էլ ընդունված է և արդիական: Նոր տարին էլ ընդունված էր դիմավորել Արևելյան աստվածներին հիշեցնող արձանիկներով և նրանց հիշեցնող պատմություններով, մանկան օրորոցին էլ պիտի աչքի ուլունք, իսկ տան մուտքին մի մեծ փշե խուրձ փակցնեինք, որ չարը չդիպչեր, էլ չեմ ասում տարբեր գուշակություններն ու սուրճի բաժակները...

Նման բաները ավելի ախորժելի են, քան՝ երբ ապրում ես քրիստոնյային վայել կյանքով՝ ամեն բան վստահելով Ամենակալին, ապրելով՝ Խոսքին տեղյակ և հնազանդ, Աստծո կամքին հաճելի, փառաբանելով և վկայելով Նրա Սուրբ և Մեծ անունը, ներելով, սիրելով ոչ թե լոկ խոսքերով, այլ ամբողջ հոգով, սրտով և մտքով:

Փա՛ռք Հիսուսին, այսօր ես չեմ ամաչում հավատացյալ բառի համար, ավելին՝ այսօր ինձ քրիստոնյա եմ համարում ոչ թե լոկ ծնունդով, այլ՝ ինչպես որ Անտիոքում ձևավորվեցին քրիստոնյաները (տե՛ս Գործք 11.26)՝ Քրիստոսին հավատալով, հետևելով, աշակերտելով և Նրա կամքի մեջ մնալով: Ոչ իբր արդեն կատարյալ եղած լինեմ, ես իմ անձը չեմ համարում, որ հասած լինեմ, բայց մեկ բան կա՝ ետևի բաները մոռանալով՝ դեպի առաջին լինողներն եմ նկրտում: Հետևում եմ

դեպի նպատակը՝ Աստծո վերին կոչումի մրցանակին՝ Քրիստոս Հիսուսում (տե՛ս Փիլիպ. 3.12-14):

Այնպես որ, սիրելի՛ ընթերցող, գուցե հակառակվե՞ս, գուցե համաձայնե՞ս, ո՞վ գիտի: Չեմ փորձում պաշտպանվել կամ էլ արդարանալ, այլ ուզում եմ՝ սիրտդ վստահորեն բացես այն Մեկի առջև, Ով «Իր անձն ունայնացրեց և ծառայի կերպարանք առնելով՝ Իրեն խոնարհեցրեց և հնազանդ եղավ մինչև մահ, և այն էլ՝ խաչի մահ: Նրա համար էլ Աստված շա՛տ բարձրացրեց Նրան և մի անուն շնորհեց, որ ամեն անունից ավելի բարձր է...» (Փիլիպ. 2.7-11):

Հավատքի ճանապարհն անցնում էինք՝ օգտվելով «TBN» ռուսական քրիստոնեական ալիքից, որտեղից առատ ու թարմ սնունդ էինք ստանում Աստվածաշնչի վերաբերյալ: Տարբեր քարոզներ, Խոսքի մեկնություններ... միաբանվում էինք նրանց աղոթքներին, և Տերն էլ կամաց-կամաց լցնում էր մեր սրտերը համբերությունով, խոնարհությունով, իմաստությունով:

Ինչպես նշել էի, դեռ կար արտաքսման վտանգը: Գրեթե բոլոր ատյաններից մերժում էինք ստացել: Շարունակ աղոթում էինք, իրավաբանը եվրոպական բոլոր օրենքները կիրառում էր մեր դեպքի համար, բայց զո՞ւր... Աստված «փարավոնի սիրտը» կարծրացրել էր, Նա էլ պիտի փխրեցներ... (տե՛ս Ելից 8.32):

Շատերն էին խղճահարությունով նայում, ու կարծես նրանց հայացքն ասեր՝ ո՞ւր է քո Աստվածը... Մի քանիսն էլ առաջարկում էին տեղափոխվել ուրիշ երկիր... բայց մի օր էլ ամուսինս, Երկնքից ստանալով համարձակություն և իշխանություն, շատերի առջև դավանեց ու հաստատեց, որ մենք այստեղ՝ Ավստ-

րիայում ունենք ապրելու և աշխատելու իրավունք: Դա իրականություն չէր, բայց հավատքով դավանանքը բացում է դռներ՝ Հիսուսի զորությունը և փառքը տեսնելու համար: Սա մարգարեական խոսքի հռչակում էր, որն իրականում շատ չուշացավ: Համառ աղոթքներից հետո ամուսինս խոսք ստացավ Հոբի գրքից. «Որովհետև արդար էլ լինեմ, պատասխան չեմ տա. իմ Դատավորին պիտի աղաչեմ» (Հոբ 9.15):

Դրանից հետո մեր ռազմավարությունը փոխվեց: Փոխեցինք մեր իրավաբանին, այլևս ոչ թե զուտ օրենքներով էինք պայքարում, այլ խոսքի համաձայն գործելով: Եթե մինչև այդ, առանց թղթերին ծանոթանալու մեր գործը մերժվում էր, դրանից հետո Տերը հանդիպում կազմակերպեց իմ և գործը վարողի հետ: Հանդիպման ժամանակ սառույցը կոտրվեց, ներողություն խնդրեցի մեր և մեր անունից հանդես եկող իրավաբանի ագրեսիվ հարձակումների համար: Չփորձեցի այլևս իրավունքներից խոսել, այլ փառք տալով Աստծուն՝ հայտնեցի նրան իմ գոհությունն ու շնորհակալությունը ամեն բանի համար: Եվ անմիջապես զգացի, որ այդ կնոջ վերաբերմունքը կտրուկ փոխվեց: Նույնիսկ այն ժամանակ, երբ արդեն քիմիաների ընդունումն էլ ավարտվեցին, կարող էին համարել, որ բժշկական առումով իմ մնալու կարիքը չկա, և ետ ուղարկեին: Բայց Աստծո Խոսքի նկատմամբ երկյուղն ու հնազանդությունը փոխեցին մարդկանց սրտերը, և մենք ստացանք Ավստրիայում ապրելու և աշխատելու իրավունք:

Կացության իրավունքը շատերի համար իսկապես մեծ հրաշք էր և վկայություն՝ Աստծո փառքի:

Նոր շրջան սկսվեց մեր ընտանիքի համար, հավատքով ու խոստմունքներով շարժվում էինք առաջ: Առաջին իսկ հայացքից թվում էր, թե նոր կարգավիճակն ավելի կհեշտացներ մեր ապրելակերպը: Ճիշտ է, որոշակիություն մտավ մեր կյանքում, բայց մեծացավ պատասխանատվությունը Աստծո առջև և երկրի իշխանությունների առջև: Ամուսինս արագ օրինական աշխատանքի անցավ ներքնակների գործարանում. ծանր աշխատանք՝ ցածր աշխատավարձով: Բայց հավատալով, որ Տերը մեզ համար լավն է պատրաստել, սիրով ու հոժարությամբ աշխատում էր, ազատ ժամերին էլ շարունակում էր շինարարությամբ զբաղվել: Գոհանում էինք եղածով ու հավատում էինք, որ քչի մեջ հավատարիմ լինենք, Աստված շատն էլ կտա (տե՛ս Մատթ. 25.21):

Ամուսնուս կյանքում հոգևոր արագ աճին զուգահեռ բացվել էր տասանորդի գաղափարը, և այն հավատարիմ ձևով օգտագործվում էր Աստծո գործերի համար (տե՛ս Մաղաքիա 3.10): Չեմ ուզում շատ մասնավորեցնել, չկարծեք ինքնագովազդ է, այլ ուզում եմ սա էլ վկայել, որ այս ամենը ոչ թե Եվրոպայի հնարավորություններն են, ինչպես շատերն են կարծում, այլ՝ մանկան նման հավատն ու վստահությունը Աստծո Խոսքի հանդեպ, որ երբեք չի փոխվում, նույնն է երեկ, այսօր և հավիտյան (տե՛ս Եբր. 13.8): Տերը հավատարիմ է և առատապես օրհնում է մեր ձեռքի գործերը: Ես էլ քիչ ժամով աշխատանքի անցա տարբեր գործատուների մոտ: Սա էլ այն օրհնություններից է, երբ շնորհք ես գտնում Աստծո և մարդկանց առջև: **Երբ հաստատվում ես Քրիստոս վեմի վրա,**

հավատքի կյանքի մեջ սկսում ես գործել Նրա սկզբունքներով:

Ամուսիններով շատ էինք աղոթում մեր տղաների համար: Բոլորին է հայտնի, թե ինչքան դժվար է երիտասարդական շատ ցանկություններից ետ մնալ և նվիրվել Աստծուն, հատկապես, երբ կան բոլոր հնարավոր միջոցները՝ թվացյալ «կյանքը վայելելու»: Տիրոջ ողորմությունն ու գթությունը, ինտենսիվ աղոթքներն այս անգամ էլ անպտուղ չմնացին. Ռուբենին և Գոռին բերեցին Շնորհքի աթոռի մոտ: «Ես և իմ տունը Աստծուն ենք պաշտելու» (Հեսու 24.15):

Որոշ ժամանակ անց ամուսինս, միջնորդ գործակալությունների միջոցով, հիմնական աշխատանքի անցավ «Spitz» գործարանում (շատերի համար սա անսպասելի էր), թերևս ժամանակավոր, բայց՝ հիմնական: Սա էլ Աստծո գործերից է, և փառքն էլ Նրանն է: Նա հավատարիմ է, ինչպես Խոսքն էլ ասում է. «Եվ դուք ետ կդառնաք և կտեսնեք ծառայություն անողի և ծառայություն չանողի տարբերությունը» (Մաղաքիա 3.18): Օր-օրի տեսնում էինք Տիրոջ հզոր միջամտությունը մեր կյանքի բոլոր բնագավառներում՝ թե՛ ընտանեկան, թե՛ առողջական, թե՛ աշխատանքային, թե՛ ֆինանսական ու կենցաղային, և թե՛ մարդկային փոխհարաբերությունների մեջ: Այս ամենին էլ հետևում էր վկայության խոսքը. «Տիրոջ աջը բարձր է. Տիրոջ աջը զորություն է գործում: Ես չեմ մեռնի, կապրեմ և Տիրոջ գործերը կպատմեմ» (Սաղմ. 118.16,17)

ՆԵՐՈՒՄԸ՝ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԴՈՒՌ

Մեծ փափագ ունեի գնալու Հայաստան, երևի հիշում եք պատմության սկզբում նշել էի, թե ինչքան վիրավորված ու դառնացած էի դուրս եկել Հայաստանից: Հաշտության ձգտումը, հարազատներիս այցելելու ցանկությունը որպես կենդանի վկայություն և Աստծո հրաշք, կրակի պես բորբոքվում էին ներսումս: Այն կացության իրավունքով, որ պետության իշխանություններից ստացել էինք, արտերկիր դուրս գալ չէինք կարող: Աղոթքներիս մեջ սրտիս անկեղծ ցանկությունների մասին պատմում էի, զրուցում Սուրբ Հոգու հետ, և մի գեղեցիկ օր Սուրբ Հոգին հայտնեց, որ իմ ներսում կա չներման հոգի, կապվածություն, որը շատ լուրջ խնդիր է գրեթե բոլոր քրիստոնյաների համար: Երկար ժամանակ նույնիսկ Տերունական աղոթքը, որ դեռ անհավատ ժամանակ շատ պաթետիկ ոգով արտասանել եմ, չէի կարողանում մինչև վերջ ասել: Այն հատվածը՝ «Եվ թող մեզ մեր պարտքերը՝ ինչպես մենք էլ թողնում ենք մեր պարտապաններին» (Մատթ. 6.12), ամեն անգամ ցնցում էր մարմինս և հարցի ձևով դառնում էր ինձ՝ բայց դո՛ւ, Գոհա՛ր, ներո՞ւմ ես քո պարտապաններին, ներո՞ւմ ես քեզ վիրավորողներին, ներո՞ւմ ես քեզ ցավեցնողներին այնպես, ինչպես երկնային Հայրն է քեզ ներում: Սա լուրջ հարց է, և կա մեկ պատասխան՝ այո՛ կամ ո՛չ: Ես չունեցա այդ համարձակությունը՝ ինքս ինձ Աստծո առջև այո՛ ասելու, որովհետև ներսումս հին գազանը՝ վիրավորվածությունը բարձրացավ, կրկին հիշեցի ամեն ցավ, լաց ու ողբալով

ծնկի եկա և երկար ժամանակ աղոթում էի, կարծես փորձում էի Հիսուսին համոզել, որ ամեն բան կանեմ, միայն ներելը շատ դժվար էր... Բայց ես տեսա. «Հիսուսը գահին նստած՝ լսում էր ու գլուխը մեղմ շարժում՝ ցույց տալով Իր անհամաձայնությունը, և կրկին ձայն. «Ես ուրիշ Ավետարան չունեմ...»: Ես շարունակեցի ուղղակի աղոթել, խնդրել ինձ համար՝ ազատ արձակելու մարդկանց, և նրանց համար, ովքեր իրենց ներսում բռնել էին ինձ:

Հաճախ մեզ թվում է, որ հեռավորությունը կամ հանդիպումների բացակայությունը օգնում է մեզ ներելու, բայց մի հեռախոսազանգ կամ հեռախոսազրույց տվյալ մարդուց կամ, նույնիսկ, զրույցի մեջ հիշատակում, ներսդ ամբողջությամբ տակնուվրա է լինում: Փա՛ռք Աստծուն ամուսնուս համար, նրա մոտ այս պահն ավելի դյուրին էր, և նա էլ ինձ օգնեց անցնելու ճանապարհը: 2013թ.-ին ստացանք երկրից ելք ու մուտք անելու իրավունքը և ութ տարվա բացակայությունից հետո պատրաստվեցինք այցելել Հայաստան՝ բարեկամներին, ընկերներին և ծանոթներին տեսնելու: Ինձ թվում էր, որ եթե ես փորձում եմ ներել ու ազատվել դառը մտքերից, մարդկանց էլ վերափոխված պիտի տեսնեի: Բայց զգացի ճիշտ հակառակ ռեակցիան. «Մեղավո՛ր էր, պիտի զղջար...»:

Գիտե՞ս, սիրտս ցավում էր ոչ թե՝ որ ինձ մեղավոր էին ասում, ո՛չ, ես ինքս եմ խոստովանում այդ մասին, և Հիսուսն էլ մեղավորների համար եկավ, այլ՝ որ բոլորն «արդար» են, ասել է թե՝ Հիսուսն իրենց համար դեռ չի եկել (տե՛ս Ղուկ. 5.32, Մարկ. 2.17): Ամեն անգամ հայացքները, նույնիսկ խոս-

քերը սրի պես խոցում էին սիրտս՝ չնայած շատ առատ հյուրասիրություններին: Եվ գրեթե միշտ Սուրբ Հոգին հիշեցնում էր. «Աստծո կամքն այսպես է, որ բարի գործերով պապանձեցնեք անխելք մարդկանց տգիտությունը» (Ա Պետր. 2.15):

Հայաստանում մենք ձեռնամուխ էինք եղել այցելելու մարդկանց, ովքեր Տիրոջ կարիքն ունեին, զրույց, շփում, աղոթք... Այցելությունների ժամանակ փորձում էինք իրականացնել նաև այն խոստումները, որ խոստացել էի դեռևս հիվանդանոցում: Բայց շատ հանգամանքների պատճառով ոչ բոլորը իրականություն դարձան: Դրանից էլ սիրտս ցավում էր: Որոշ բաներ իրենց տեղում չէին՝ իմ սպասելիքներին հակառակ, մասնավորապես այնպիսի բաներ, որոնք մտքով նախատեսել էի նվիրատվությունների, զոհաբերությունների համար: Ամեն անգամ հյուրասենյակի կահույքի դռները բացելով և չգտնելով իմ փնտրածները՝ սիրտս կրկին լցվում էր տհաճ զգացումով, որն ինձ ստիպում էր գոռալ, ուղղակի ճչալ, բայց Հիսուսի՝ «7x70» ներման խոսքը գերազանցեց, և հենց այդ պահին ես զգացի Տիրոջ շնորհքի հաղթանակը. ես հաղթեցի... **Ինչպես որ Հիսուսը պատռել էր իմ բոլոր պարտամուրհակները ու ներել ինձ՝ դրա դիմաց ոչինչ չուզելով, այնպես էլ ես կարող եմ Հիսուսի թանկ ու զորավոր անունով և գերազանց շնորհքով պատռել բոլոր պարտամուրհակները և վերջնականապես ազատագրվել սատանայի խայծից, գործած որոգայթից:**

Փառք Աստծուն, Աստված իրեններին ամեն տեղ ունի, այդ օրերին Տիրոջ Հոգով ապրող Հիսուսի մարմնի անդամները

Հայաստանում մեզ շատ օգնեցին: Աղոթքներ, զրույցներ, փառաբանություն, որոնք օգնում են խաղաղությամբ և համբերությամբ շինություն առնելու:

Իմ հոգում բացվեց շատ կարևոր մի բան. ներելը և ներվելը էլ ավելի համարձակ են դարձնում: Ամեն ինչ, որ աղոթք անելով խնդրենք, կառնենք, և կլինի մեզ, որովհետև Հիսուսը մեզ սովորեցրեց. «Եվ որ ժամանակ կանգնեք աղոթք անելու, ներեք, եթե մեկի դեմ բան ունենաք...» (Մարկ. 11.25,26):

ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆ

Չէինք դադարում Տիրոջ փառքը վկայել: «7x70» հեռուստաընկերությունը տեսագրեց մեր վկայությունը, որը տարածվեց գրեթե ամբողջ հայախոս երկրներով: Մեր վերադարձից հետո ստանում էինք արձագանքներ, դեռ մինչև հիմա էլ հեռախոսազանգեր ենք ստանում: Ու եթե կարողանում ենք գոնե մեկին մխիթարել, քաջալերել ու հորդորել Աստծո խոսքով, դա իրական երանություն է մեզ համար:

Արձագանքներն իհարկե տարբեր էին: Շատերն էլ չէին համաձայնում այն մտքին, որ ես պիտի բարձրաձայնեմ այդ ամենի մասին, գիտեին՝ պարզապես պիտի լուռ հավատամ: Բայց, ինչպես գրված է. «...Հավատացի և դրա համար խոսեցի...» (Բ Կորնթ. 4.13):

Շատերն էլ կասկածեցին հայ տեսակիս վրա: **Քրիստոսին հետևելը չի նշանակում պատկանելության, ազգության կամ դավանանքի փոփոխություն, այլ՝ հաստատում է իրական հայ քրիստոնյայի տեսակը, այն տեսակը, որ կռիվներ ու պայքար է տվել հավատքի ու գոյության համար: Այն տեսակը, որ լինելով առաջին քրիստոնյա ազգից, ապրելով դրսում՝ կարողանում է ցույց տալ հայ-քրիստոնյայի իրական դեմքը՝ պահպանելով լեզուն ու հավատքը ոչ թե մարդկային վարդապետություններով ու Աստծուն անարգող ավանդություններով (տե՛ս Մարկ. 7.6-10), այլ ճշմարտության խոսքով (տե՛ս Բ Կորնթ. 6.7):** «Եվ աշխատում ենք մեր ձեռքերով գործելով. բամբասում են, իսկ մենք օրհնում

ենք. հալածում են, և մենք համբերում ենք. հայհոյում են, մենք աղաչանք ենք անում...» (Ա Կորնթ. 4.12,13): Շատերի համար «...ինչպես մոլորեցնողներ, բայց ճշմարիտներ, ինչպես չճանաչվածներ, բայց լավ ճանաչվածներ, ինչպես մեռածներ, բայց ահա կենդանի ենք, ինչպես պատժվածներ, բայց չսպանվածներ, ինչպես տրտմածներ, բայց միշտ ուրախներ, ինչպես աղքատներ, բայց շատերին հարստացնողներ, ինչպես թե ոչինչ չունեցողներ, բայց ամեն բան ունեցողներ» (Բ Կորնթ. 6.7-10):

Այո՛, այսօր ես չեմ ամաչում, որ հայ-քրիստոնյայի այն տեսակն եմ, որ դեն է գցում հին խմորը՝ նոր զանգված լինելու (տե՛ս Ա Կորնթ. 5.7), սիրուն հետևելու և հոգևոր պարգևներին նախանձավոր լինելու (տե՛ս Ա Կորնթ. 14.1):

Հայ-քրիստոնյայի այն տեսակը, ում պաշտամունքի առարկաները և շատ իրական հոգևոր արժեքներ վերաիմաստավորվել են: Այն տեսակը, որ ոչ թե մեր անձերի մասին ենք վկայում, այլ Տեր Հիսուս Քրիստոսի (տե՛ս Բ Կորնթ. 4.5): Այն տեսակը, որ ոչ թե մեզանով ենք պարծենում, այլ՝ Տերով, ինչպես որ Աստծո Խոսքում էլ գրված է. «Եվ ով պարծենում է, թող Տերով պարծենա, որովհետև ոչ թե իր անձը հանձնարարողն է ընտիր, այլ նա՝ որին Տերն է հանձնարարում» (Բ Կորնթ. 10.17,18):

Հաստատ ու հավատարիմ մնալով հավիտենական Խոսքին, որ Հոգու սուրն է (տե՛ս Եփես. 6.17), մենք մեր սրտերն ենք թլփատում՝ ապրելու և ապրեցնելու, տալու և ոչ՝ ստանալու, նվիրելու և ոչ՝ պահանջելու:

Գրքի վերջին գրառումներն էի անում. այդ օրերին փոքր տղաս՝ Գոռը, հանձնեց գիմնազիայի մատուռայի քննություններ-

ը: Ավարտական երեկոյին շատերը մեզ հետ հիշեցին գիմնազիայի առաջին դասարան գնալու չարաբաստիկ օրը՝ 2008թ.-ի սեպտեմբերի ութը: Լինելով մեր կյանքի պատմության ականատեսը՝ հիացմունքով էին արձագանքում արդի իրավիճակի մասին: Հետադարձ հայացք գցելով այս ութ տարիներին՝ համոզվեցի, որ «Աստծուն սիրողների համար բոլոր բաները գործակից են լինում դեպի բարին...» (Հռոմ. 8.28): Այդ անցած ճանապարհի մեջ ես տեսա Աստծո մեծ սերն ու երկյուղը, շնորհքն ու ողորմությունը, անսահման գթությունն ու համբերությունը:

Այս ամենը ակնհայտ երևաց մեծ տղայիս՝ Ռուբենի կյանքի, ընտանիք կազմելու, տարբեր թղթաբանությունների մեջ...

Եվ, ի վերջո, օր-օրի զգում ենք խաչված ու հարություն առած Քրիստոսի՝ Աստծո զորությունն ու իշխանությունը: Ավելի ու ավելի է հաստատվում Խոսքի ճշմարտությունը և հետևելու կարևորությունը: Եվ չենք դադարում Հիսուսի Բարի լուրն ավետել ու վկայել (տես Հայտն. 12.11):

Հրաշքը կարող է հայտնել Աստծո մեծությունն ու զորությունը, իսկ ապաշխարությունը՝ բերել Նրա մոտ:

Սիրելի՛ ընթերցող, ավարտելով միտքս՝ փափագս ու աղոթքս է, որ այս ժամանակը, որ հատկացրիր այս պատմությունն ընթերցելուն, անպտուղ չմնա:

Հանձնվի՛ր Հիսուսին, սիրտդ տո՛ւր Նրան...

«Որովհետև Նրանից և Նրանով և դեպի Նա է ամեն բան. Նրան փա՛ռք հավիտյան, ամե՛ն»:

Հռոմեացիների 11.36

Սիրելի՛ ընթերցող, գիրքը վաճառքի ենթակա չէ:
Ցանկության դեպքում օգնե՛ք «Օգնեմ» հիմնադրամին՝
արյան քաղցկեղով հիվանդ երեխաներին: Նրանք իմ եւ քո
աջակցության կարիքն ունեն:

Correspondent bank:
DEUTSCHE BANK TRUST COMPANY AMERICAS SWIFT: BKTRUS33

Beneficiary bank:
ACBA-CREDIT AGRICOLE BANK SWIFT code: AGCAAM22
correspondent account n. 04422200 USD (DO NOT use as beneficiary account number)

Beneficiary name: <OGNEM> FOUNDATION
Beneficiary account number:220493350015000

«Օգնեմ» հիմնադրամ
ՀՎՀՀ 01009846
www.ognem.am
mail:ogneminfo@gmail.com
հեռ.՝ +37499524590

ՓՈՔՐ ԿՅԱՆՔԻ ՄԵԾ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Գոհար Մուրադյան

Հրաշքը կարող է հայտնել Աստծո մեծությունն ու զորությունը, իսկ ապաշխարությունը՝ բերել Նրա մոտ:

Սիրելի՛ ընթերցող, փափագս ու աղոթքս է, որ այս ժամանակը, որ հատկացնելու եք այս պատմությունն ընթերցելուն, անպտուղ չմնա:

Հանձնվի՛ր Հիսուսին, սիրտդ տո՛ւր Նրան...

«Որովհետև Նրանից և Նրանով և դեպի Նա է ամեն բան. Նրան փա՛ռք հավիտյան, ամե՛ն»: